№ 141 ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26 1907 ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26 № 141

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

— ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ —

ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐԸ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ ԱՐԺԷ

ԵՐԿՈՒ րուբլի

Մի ամսվայ համար 1 րուբլի

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ

Աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների և կանդիդատների, որ անցեալ տարիների նման ժողովարանի ձմերային շէնքում շաբաթական կը լինի 2 ընտանեկան երեկոյթ՝ երեքշաբթի և շաբաթ օրերը. երեքշաբթի օրերը կը լինեն սազանդարներ, իսկ շաբաթ օրերը զինւորական երաժշտութեան օրկեստրը։

առ. (ու. շ.) 1—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների և կանդիդատների, որ

ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ

կը գործէ ներկայ հոկտեմբերի 27-ից հին ցուցակով։ առ. 1—2

Երեկոյեան դասընթացքներ մայրերի եւ դաստիարակչուհիների համար

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ

(Միքայէլեան պրոսպ. № 138)

Պարապմունքների առարկաներն են՝ մանկավարժութիւն, մանկավարժական հոգեբանութիւն, մարդակազմութիւն և ֆիզիոլոգիա, առողջապահութիւն (գլխաւորապէս մանկան), առաջին օգնութիւն հասցնելը, կենդանաբանութիւն և բուսաբանութիւն, առօրեայ կեանքի քիմիա, մանկական պարտէզների թէօրիա, գործնական պարապմունքներ մանկական պարտէզներում։ Ունկնդրուհիների ընդունելութիւնը սեպտեմբերի 28-ից։ Պարապմունքների սկիզբը հոկտեմբերի 9-ից։

(առ.) (Ե. ու.) 2—6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վտանգված շրջան. Ժողովրդական համալսարան. Վերջին տեղեկութիւններ. Պետական Դումայի շուրջը. Տեղեկութիւններ գաւառից. Տաշեղներ. «Մուրճ» ամսագրի խմբագրութեան կողմից. Ժողովրդական համալսարանի հայկական դասընթացքները. Թատրոն և երաժշտութիւն. Ապահովագրութիւն կողոպուտների դէմ. Դպրոցական ցաւերից. Նուխու դպրոցների շուրջը. Թիւրքահայ սովեալների օգտին. Բնական աղէտներ. Գաւառական ուսուցչի Թռուցիկ տպաւորութիւններից. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. Ռուսաստանի կեանքից. Մամուլ. Նամակ խմբագրութեան. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Ագիլէֆիվայ գաւառից.

ՎՏԱՆԳՎԱԾ ՇՐՋԱՆ

Ամբողջ երեք ամիս է անցել այն դժբաղդ օրից, երբ սարսափելի կարկուտը մի քանի րօպէի մէջ ոչնչացրեց և հողի հետ հաւասարեցրեց Նորաղուզ գիւղի ցանքսերը։

Գիւղական մի մեծ ազգաբնակութեան մի անգամից շպրտվեց սարսափելի կարիքի գիրկը։

Այլեւս հունձ չը կար։ Հաց չը մտաւ գիւղական տունը։

Իսկ այդ տունը հին պաշարներ չունէր, որովհետեւ նախորդ տարին աննպաստ էր եղել և գիւղացիները նոյն իսկ ստիպված են եղել դիմելու կողմնակի օգնութեան։ Կառավարութիւնն էլ իր կողմից մասնաւոր մի նպաստ հասցրեց գիւղին։

Կարիքի և տառապանքի մէջ տանջվող գիւղացին, որ յոյս ունէր իր արտերի վրա, սարսափահար եղաւ, երբ անօրինակ կարկտի հարուածները րոպէապէս չքացրին նրա բոլոր ցանքսերը։

Եւ գիւղն ստիպված եղաւ ամառվայ կիսին ծախել իր անասունները, իր տան փոքր ի շատէ արժէքաւոր իրը հաց գնելու համար։

Նորաղուզը ունի 3333 հոգուց բաղկացած մի խոշոր ազգաբնակութիւն, որը այժմ աղերսում է օգնութիւն։

Նորաղուզի վիճակին ենթարկվեց նաև Նոր-Բայազէտ քաղաքի և Ղշլաղ գիւղի ցանքսերի մի մասը, որոնք վնասվեցին թէ կարկտից և թէ հեղեղներից։

Աղէտին ենթարկված տեղերի ազգաբնակութիւնը կարօտութեան մէջ է արդէն ամառվանից։ Փոքր ի շատէ ունևոր մարդիկ, որոնք ծախելու բան ունէին, ծախեցին և մի փոքր փող գցեցին իրանց ձեռքը, ով կարողացաւ՝ պարտքեր արաւ ծանրագին պայմաններով, միւսները պանդխտեցին դէպի քաղաքները. իսկ շատերը մնացել են գիւղական տանը, նպաստի սպասելով կառավարութեան կամ հասարակութեան կողմից։

Ձուտափոյթ օգնութիւնը անհրաժեշտ է, որովհետև կարիքը, քաղցածութիւնը, սովը արդէն կրծում են ժողովրդի կեանքը, և նոյն իսկ տեղի են ունեցել սովամահութեան դէպքեր։

Նպաստամատոյց Յանձնաժողովը պարտաւոր է իր մնացորդներից բաժին հանել Նորաղուզի, Նոր-Բայազէտի և Ղշլաղի աղէտեալներին, յատկացնելով մի քանի հազար րուբլի։

Հասարակութիւնը պէտք է իր օժանդակութեամբ թեթեւացնէ աղէտեալների սոսկալի վիճակը։

Ա. Քալանթար

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«Մշակի» վաղուց քարոզած և փայփայած միտքը՝ ժողովրդական համալսարանի հաստատութիւնը այժմ իրագործված կարելի է համարել։ Ռուսական ազատագրական շարժման ենք պարտական, որ այսօր Թիֆլիսում, և երևի շուտով նաև միւս հայաբնակ կենտրոններում, մենք հնարաւորութիւն ունենք դասախօսութիւններ լսել մեր մայրենի լեզուով համալսարանական գիտութեան զանազան առարկաներից։

Հոկտեմբերի 24-ից իր գործունէութիւնը սկսեց այդ համալսարանի հայկական դասախօսութիւնների բաժանմունքը։ Գիտութիւնը, որ հայրենիք չունի, համաշխարհային է, որի համար չը կայ ոչ հելլեն, ոչ հեթանոս, ոչ հայ, ոչ հրէայ, ոչ թուրք, իր հզօր հմայքով միացնում է զանազան քաղաքական կուսակցութեան և զանազան դաւանանքի պատկանող անձանց՝ գործելու յօգուտ ժողովրդի, նպաստելու լոյսի թափանցման այն մասսայի մէջ, որ ընկճված ծանր աշխատանքի ներքոյ՝ հնարաւորութիւն չունի բարձր ուսումն ստանալու և հաղորդակից լինելու քաղաքակրթութեան բարիքներին։ Միայն գիտութիւնը, զուտ, ճշմարիտ գիտութիւնը կարող է լուսաւորել կեանքը, նրա մութ և խաւար խորշերը և ներշնչել ժողովրդական մասսաների մէջ հաւատ դէպի արդարադատութեան վերջնական յաղթանակը և դէպի լաւագոյն սօցիալական կազմը։

Սակայն հայկական ժողովրդական համալսարանը կարող է յարատեւութիւն ունենալ միայն այն դէպքում, եթէ մեր ժողովրդի ունևոր մասը չը խնայէ իր բարոյական և նիւթական աջակցութիւնը Թիֆլիսի ժողովրդական համալսարանի վարչութեան, որպէսզի սա հնարաւորութիւն ունենայ ճիւղեր բանալու և գաւառական կենտրոններում։ Եւրոպական ազգերի մէջ ժողովրդական համալսարանի գաղափարը կարողացել է իրագործվել միայն շնորհիւ այն հանգամանքի, որ ժողովրդական բարօրութեան մասին մտածող ունևոր քաղաքացիները իրանց բարոյական պարտաւորութիւնն են համարել ծածկել գոյացած դեֆիցիտները իրանց նիւթական օժանդակութեամբ։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 24 հոկտեմբերի

Գուրկօյի վերաբերութեամբ այսօր շարունակվեց վկաների հարցաքննութիւնը։ Ցուցմունքներ տուին ֆինանսների մինիստր Կոկօվցեվը, նրա օգնական Պօկրօվսկին, Ստիշինսկին, Գուրկօյի հետ գործ ունեցած ֆիրմաների ներկայացուցիչները։ Կարդացվեցին մինիստրի խորհրդի տանը տուած ցուցմունքը և բացակայ վկաներ՝ բարոն Ֆրեդերիկսի, Լիդվալի և միւսների գրութիւնները։ («Հ. Գ.»)

—

Գանձակ, 24 հոկտեմբերի

Զանգեզուրի գաւառում սպանվեց յայտնի աւազակապետ Աստան-Սուլթան-Ալի-օղլին։ («Հ. Գ.»)

—

Հալէպ, 24 հոկտեմբերի

Հացի թանգութեան պատճառով հոկտ. 22-ին փողոցային ցոյցեր տեղի ունեցան։ Ամբոխը մտադրվեց կողոպտել խանութները։ Վալին և ժանդարմները հանդիպեցին բարէ տարափի։ Մի քանի մարդ վիրաւորված են։ Կարգը վերահաստատված է։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 24 հոկտեմբերի

Բացի եղած 14 վաշտից բաղկացած հրացանաձիգ գնդից, Բօսֆօրը ամրացնելու համար կազմվում է նոր գունդ, որ բաղկանալու է 10 վաշտից։

(«Բիւրօյի Թղթ.»)

—

Կ. Պօլիս, 24 հոկտեմբերի

Հոկտեմբերի 20-ին Մօնաստիրի վիլայէթում բօլգարական Այտօս գիւղի վրա յարձակվեց յունական մի հրոսակախումբ, որ իր հետ ունէր ռումբեր։ Հրոսակախումբը այրեց 16 տներ, սպանեց 3 տղամարդ և 5 կին։ Զօրքերը հրոսակախմբի առաջխաղացման առաջն առան։ («Բ. Թ.»)

—

Կ. Պօլիս, 25 հոկտեմբերի

Յունաց դեսպանատունը Բ. Դրան լուրջ բողոքագիր ներկայացրեց Մօնաստիրի վիլայէթում և Սերեսի սանջակում բօլգարական հրոսակախմբերի՝ յոյների դէմ կատարած գործողութիւնների առիթով։ Դեսպաններից մի քանիսը Բ. Դրան մատնանշեցին, որ վերջին ժամանակներս երևան է եկել հրոսակախմբային շարժում, և խորհուրդ տուին՝ միջոցներ ձեռք առնել։

(«Բ. Թ.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

ՄՈՍԿՎԱ, 24 հոկտեմբերի։ Առաջին կուրիայում Պետական Դումայի անդամներ ընտրվեցին—Ալէքսանդր Իվանովիչ Գուչկօվ՝ հոկտ. 17-ի միութեան կենտրօնական կօմիտէտի նախագահ, բարձրագոյն կրթութեան տէր, քաղաքային դումայի և զեմստվային ձայնաւոր. Ֆէօդօր Նիկիֆորովիչ Պլէվակօ՝ հոկտ. 17-ի միութեան կենտրօնական կօմիտէտի անդամ, բարձրագոյն կրթութիւն ստացած, երդուեալ-հաւատարմատար։

(«Հ. Գ.»)

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 հոկտ.։ Առաջին կուրիայում տրվեցին 2022 ընտրողական թերթիկներ։ Հոկտեմբերեաններ ֆօն-Անրէպը ու Լերխէն ստացան 1212 և 960 ձայն և ընտրվեցին Պետական Դումայի անդամներ։

Սահմանադիր-ռամկավարների թեկնածուները ստացան. Ստասիւլէվիչը՝ 732 ձայն, Սուրբօտինը՝ 746։

Երկրորդ կուրիայում տրվեցին 39,367 թերթիկներ։ Ընտրվեցին սահմանադիր-ռամկավարների թեկնածուներ՝ Րօդիչէվը 20,432 ձայնով և Կօլիւբակինը 19,316 ձայնով։

Հոկտեմբերեանների թեկնածուները ստացան. Միլիտինը՝ 7314 ձայն, Պերցօվը՝ 6290։

Ձախակողմեան բլօկի թեկնածուները ստացան. Լուտուգինը՝ 5287 ձայն, Սօկօլօվը՝ 4841։

Աջակողմեանների թեկնածուներից Կուլակօվսկին ստացաւ 1216 ձայն, կոմս Ապրակսինը 738։ («Հ. Գ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գանձակ, 20 հոկտ.

Այսօր, ամսիս 20-ին, հողին յանձնեցին Թօփալ-հասանլուեցիների ձեռքով սպանված բանանցեցի պատուական երիտասարդ Միքայէլ Մանուչակեանի մարմինը։

Յուղարկաւորութեանը մասնակցում էր մի չը տեսնված բազմութիւն։ Բացակայում էր քաղաքի այն դասակարգը, որի համար հանգուցեալը, իբրև ինքնապաշտպանութեան զինւոր, իր կուրծքը դէմ էր տուել թշնամու գնդակին՝ կռւելով ամենավտանգաւոր վայրերում։

Հանգուցեալը չէր պատկանում այն պոռտախօս երիտասարդների թւին, որոնց սովորութիւնն է իրանց օրերը ինքնագովութեամբ անցկացնել և միևնոյն ժամանակ գործած հերոսութիւնների փոխարէն իր ազգի վրա քաֆր ու քօռմաք բարձել... Նա վերին աստիճանի համեստ երիտասարդ էր և դժուար վայրկեանին միշտ պատրաստ էր իր կեանքը զոհաբերելու։ Իսկ խաղաղ օրերին մուրճը ու մալան ձեռքին պարապում էր բանւորութեամբ։

Եթէ Թուրքերը իմանային, թէ հանգուցեալը որքան կողմնակից էր երկու գրացիների համերաշխութեան գաղափարին, նրանք երբեք ձեռք չէին բարձրացնի նրա վրա։

Հանգուցեալի յարգողներից շատերը ցանկութիւն էին յայտնել նրա վրա պսակներ դնելու, բայց մի խումբ պարոններ, լսելով նրա յարգողների այդ մտադրութիւնը, խորհուրդ էին տուել պսակի փոխարէն գումարները յատկացնել հանգուցեալի հայրենիք Բանանց գիւղում նրա անունով բացվելիք գրադարան-ընթերցարանին։

Բայց և այնպէս՝ այդ որոշումներից ոմանք անտեղեակ՝ հանգուցեալի վրա դրել էին ութ պսակ, որոնցից մէկը թարմ ծաղիկներից էր հիւսած։

Եկեղեցում դամբանական խօսեցին՝ պ. Շահէն, պ. Ա. Բալայեան և օր. Մ. Պապեան (քիչ ուշ մտնելով եկեղեցի՝ անկարող եղայ լսելու բոլոր ճառերը), և ինչպէս պատմեցին, բոլոր ճառախօսները յորդոր են կարդացել ժողովրդին, որ երբեք վրէժխնդիր չը լինեն իրանց ամարդի դրացի Թուրքերից. որքան այս մասնաւոր բնաւորութիւն կրող կորուստը թանգագին լինի բոլորի համար, հայերը պէտք է ներողամտաբար վերաբերվեն, միաժամանակ մտնեն նրանց շրջանը և համերաշխութեան ու եղբայրական գաղափար քարոզեն, և այդ չարիքի արմատը ընդհանուր Թուրք ազգի մէջ չորացնեն...

Հրաշալի տպաւորութիւն է թողել հանդիսականների վրա մանաւանդ օր. Մ. Պապեանի ճառը։

*

Ամսիս 18-ին մի Թուրք հովիւ գանգատվել է իշխանութեանը, որ, Կօրինաշէնից ոչ այնքան հեռու, կօրինաշէնցիք քշել-տարել են 27 ոչխար։

Կօրինաշէնի տանուտէր Աբրահամեանը և հայոց մասի պրիստաւ Եֆիմօվը գնալով դէպքի վայրը, հետամուտ լինելով ոչխարների գնացած հետքերին, ոչխարները գտել են կօլօնիայի ճանապարհին արածելիս, և պարզվել է, որ ոչ թէ ոչխարները քշել-տարել են, այլ նրանք իրանք են հեռացել հովւի քնած ժամանակ։

Հոկտեմբերի 19-ին, գիշերվայ ժամի 11-ին, Կօրինաշէնի մօտից մի խումբ զինված աւազակ Թուրքեր յարձակւում են գործում Միրզաջան Մելքոնեանի Թուրք հովիւների վրա և փորձում են տանել 700 ոչխար։

Հրացանների կրակոցի ձայնին՝ վրա է հասնում Կօրինաշէնի տանուտէր Աբ. Աբրահամեանը և մի քանի անգամ ատրճանակ կրակելով՝ փախցնում է Թուրքերին, որոնք հետները տանում են միայն 21 ոչխար։ Հրացանաձգութեան ժամանակ սպանվել է հովւի մի շունը։

Գողութեան մէջ կասկածվում է Աբբաս Հաջի Մելիքօվ, որի դէմ գանգատ է տուել ոչխարի տէրը։

*

Թօփալ-Հասանլուի մօտ պատահած դժբաղդ դէպքի նախնական քննութեան մէջ առաջնակարգ դեր է խաղում գաւառապետի օգնական Ֆարրաշ-բէկը։ Այն երեք գերիները (այդ մասին ընդարձակ թղթակցութիւն ունեմ գրած երէկ), որոնց Թուրքերը տարել են Ֆարրաշ-բէկի մօտ և ըսպառնացել, որ իրանց համար նպաստաւոր ցուցումներ տան, այժմս յետ են վերցնում սպառնալիքի տակ տուած ցուցումները, որը խիստ ցաւ է պատճառել գաւառապետի օգնականին։

Առայժմս բանտ են ուղարկված՝ Զաքար Ղաւալեանցը և Մկրտիչ Տէր-Մկրտչեանցը, որոնց մօտ, Թօփալ-հասանլուեցիների ցուցմունքով, իբրև թէ ատրճանակներ են եղել։

Ֆարրաշ-բէկի նման անձինք մի անգամ ընդ միշտ պէտք է հասկանան, որ յանցաւորների փոխարէն անմեղներին բանտ ուղարկելով՝ ոչ թէ յուզումների առաջն կառնվի, այլ նորանոր յուզումների տեղիք կը տայ հակառակ կողմի շրջանում։ Պէտք է աշխատել իսկական յանցաւորներին պատժել, և ոչ թէ այն անմեղներին, որոնց անմեղութեան համար կը վկայեն ոչ թէ միայն հայերը, այլ և կը խոստովանվեն նաև Թօփալ-հասանլուեցիք։

Սպանված Միքայէլի բարեկամները վաղը ուզում են իրանց գանգատներով դիմել գեներալ-նահանգապետին։

Մինչև այսօր եթէ նրանք չեն դիմել գեներալ-նահանգապետին, նրանք այնպէս հաւատացած են եղել, որ այդ եղելութիւնը յայտնելու է գաւառապետի օգնականն այնպէս, ինչպէս իրողութիւնն է։

Գոնէ նախնական քննութեան ժամանակ Թօփալ-Հասանլուում Ֆարրաշ-բէկը իրեն վրա վատ տպաւորութիւն չը թողեց։

Աւ. Սահակեան

—

Թալիշ գիւղ, 10 հոկտեմբերի

Խաւարեց հայ գիւղացու օրը... Բախտն էլ չէ ժպտում նրան։ Մի տեղ բնութեան անեղ արհաւիրքների դաժան հարուածներն են իջնում նրա գլխին, մի այլ տեղ անկուշտ վաշխառուն՝ մարդ-հրէշն է առել նրան իր սուր ճանկերի մէջ ու անգթօրէն հիւծում, արնաքամ է անում նրա առանց այն էլ կմախք դարձած, չորացած մարմինը։

Շատ-շատերից բաց անենք այստեղ մի գիւղի վէրքերը։

Ջիվանշիր գաւառի Թալիշ գիւղը մշակում է բարձրադիր սարահարթը ու գիւղից հաւաս տարածվող լայն, ընդարձակ դաշտավայրը, որը ոռոգվում է Ինչա-չայ գետից մի չարաբաստիկ ջրանցքով, որ շինված է այստեղի կալուածատէր Թալիշ-բէգ և Թամրազ-բէգ Մելիք-Բէգլարեանցների օրով, մօտ յիսուն տարի առաջ։

Այդ կարճ միջոցում տասնեակ անգամ փլվել է այդ ջրանցքը ու բաւական լուրջ աշխատանքներից յետոյ նորոգվել։

Այս սև օրերին կարծես վերջնականապէս լրացաւ այդ ջրանցքի ջուր մատակարարելու ժամանակը։

«Սարըլըղ» կոչվող տեղից բացվեց մի ահագին ճեղքուածք ու ջուրը կտրվեց։

Ամբողջ ինն ամիս հալ ու մաշ է լինում Թալիշեցին ջրանցքի վրա։ Մինչև վերջին աշխատանքի ընդունակը բանում է քաղցած փորով, բայց բոլորն ի դերև է անցնում։ Ջրանցքը միանգամայն փչացած է։

Այնքան պղաբեր՝ մի քանի հազար դեսեատին հողը մնաց ամայի, խոպան։

Անցեալ տարի ցանքսերը անջուր մնացին, իսկ աւերող երաշտն էլ հօ պակասը լրացրեց։

Խեղճ Թալիշեցին ամեն կողմից յոյսը կտրած՝ դիմեց Ղարիանի Ջամիլլու տափարակները, Թուրք կալուածատէրերի համար հունձ անելու։

Ամառվայ տօթակէզ օրերին, երբ շիկացած երկնքից կրակ էր թափվում, Թալիշեյին հունձ էր անում Կուրի ափերին, որտեղի բնակչութիւնը մինչև վերջին շնչաւորը քաշվել էր «եայլաղներ»: (Այստեղ սովորականին արտերը հնձվում են սարերից իջնելուց յետոյ):

Աչքը յառած չնչին հնձավարձին, 15—20-ից մէկը, նա ամբողջ ամիսները տանջվեց կիզիչ արևի տակ, իսկ այժմ էլ հիւանդ-շնչասպառ ընկած է տանը:

Կարծես մի բան էլ էր պակասում սրտառուչ պատկերը կատարեալ դարձնելու: Հայ-Թուրքական կռիւների պատճառով երեք տարի շարունակ պետական հարկերը չէին հաւաքվում, իսկ նրանք սուս ու փուս դիզվում էին օր-օրի վրա: Երէկ, ժամը 9-ին, պրիստաւը մի խումբ ստրաժնիկներով եկաւ գիւղը ու հրամայեց, որ երեք ժամվայ ընթացքում յանձնեն իրան բոլոր недоимка-ն և այս տարվանն էլ հետը՝ 2000 ր.:

Ունևոր դասակարգից գտնվեցին մի քանի բարի մարդիկ, որոնք լրացրին կէսը ու յանձնեցին, իսկ կէսին էլ կարճ ժամանակ խնդրեցին:

—Ո՞վ է տեսել այսպիսի պատահար, այսպիսի պատիժ. մենք անմեղ ենք, Աստուած մեզ պատժում է,—լալիս է դժբաղդ գիւղացին՝ աչքերը յառած կապոյտ երկնակամարին:

—Էհ, ինչ արած, մեր ճակատին էլ այս է գրած, պէտք է հնազանդվել,—հանգստացնում է միւսը:

—Մենք կը կոտորվենք, մենք կը փչանանք,—յուսահատված բացականչում է երրորդը, երբ կամենում ես նրա դարդերն հարցնել, նրա վէրքերին մօտենալ:

Ձեզ եմ դառնում, օտարութեան մէջ գտնվող Թալիշեցի եղբայրներ, ձեր մանկութեան քաղցր օրրանը գտնվում է ծանր և օրհասական տագնապի մէջ: Սարսուռ տարածող սովը չոքած է ձեր դժբախտ հայրենակիցների շէմքում: Փութացէք օգնել՝ որքան ձեր համեստ ոյժերն են թելադրում: Մերկ ու քաղցած շինականի անօգնական ձայնը թող արձագանք գտնի ձեր սրտերում:

Սիւնեցի Լեւոն

ՏԱՇԵՂՆԵՐ

VI

> Въ надеждѣ славы и добра
> Гляжу впередъ я безъ боязни!
> А. С. Пушкинъ

Պետական Դումայի ընտրութիւնները վերջացան... այն հետևանքներով, որ կարելի էր սպասել յունիսի 3-ի օրէնքից (տես իմ յօդուածները «Մշակ»-ի 101-դ և 106-դ համարներում): Ժողովրդի վիճակը յանձնված է ազնուականութեան բացարձակ յետադիմական մասի և նրանց արբանեակների ձեռքը. չը կայ իմ յիշողութեան մէջ քիչ շատ աչքի ընկնող կլօուն-սկանդալիստ, որ անցած չը լինի պարլամենտի մէջ: Սարատովի կոմս Ուվարովը, ֆրանսիական մարկիզ և ապա «ռուս ժողովրդի դաշնակցութեան» ջերմ կողմնակից կոմս Դօբրըր՝ Կուրսկից, Ալեքսէևը՝ Վարշավայից, պրոֆ. Վեզիգինը՝ Խարկովից, և շատերը, որոնց անունները դու, Աստուած, միայն գիտես, պիտի նսեմացնեն Պուրիշկևիչների, Բոբրինսկիների դափնիները...

Եւ ես այնուամենայնիւ ոչ ահով, ոչ երկիւղով եմ նայում առաջ. չէ, չէ, ժողովրդի գործը վտանգված չէ: Եւ դա չեմ ասում նրա համար, որ շլացած եմ, տարված վերացական մտքերով: Ոչ ոք այժմ առաջադիմական բանակում այլ ևս հիւանդ չէ պարլամենտական կրետինիզմով, ինչպէս սիրում են ասել անիշխանականները, ոչ ոք ամեն ինչ չէ սպասում պարլամենտից և միայն պարլամենտից. ամենքի համար պարզ է, որ եթէ Թոյլ օպպօզիցիան «երկրի հետ խօսում է հզօր և դեկը ձեռքին ունեցող յետադիմական կուսակցութեան գլխի վրայով», նոյնպէս յայտնի է, որ պարլամենտների պատերին են ծփում և ժողովրդական յուզմունքների ալիքները և ստիպողաբար Թելադրում վճիռներ...

Ուշադրութիւն դարձրէք, որ երկիրը դեռ «խելքի չէ եկել» և ընտրել է դիմադիր կուսակցութիւնների մարդիկ. Ինչ փոյթ, որ արհեստական ընտրողական արարողութիւնները գերակշռութիւն են տուել ազգաբնակութեան հազիւ մի տոկոս կազմող փոքրամասնութեան՝ ազնուականութեան, որ Ռուսաստանի «սիրտը» Մոսկվան և ինտելլիգենցիայի «գլուխը» Պետերբուրգը հեռու են «սև հարիւրեակային երկիւղից», որ ազնուականներից զուրկ նահանգները (Վեատկայի, Պերմի և Ուֆայի) ուղարկել են միայն դիմադրական կուսակցութիւնների անդամներին: Այդ ընտրութիւնները եկան ապացուցանելու «յափշտակվող» ձախակողմեանների (Ա. Պետրիշչևի և Ս. Էլպատևսկու) և «լուրջ» կադէ բժ. Շինգարեվի պնդածները, թէ երկիրը անդառնալի կերպով Թօթափել է իր վրայից «կուռքերի» հմայքը, որ վերջերս նկատելի «անտարբերութիւնը» հետևանք է մի կողմից ժողովրդի կեանքը արտացոլող հալածված մամուլի լռութեան, միւս կողմից աւելի լուրջ վերաբերումը դէպի իսկական վերածնութիւնը, որին մի հարուածով, մի բռնկումով չէ կարելի հասնել, առանց կազմակերպվելու:

Եւ ժողովրդի այդ սթափումն է այն գլխաւոր յայտարարը, որ նոյն իսկ պահպանողական մեծամասնութիւնը Դումայում—սակայն ինչ պիտի նրանք պահպանեն՞ Ցուսիման թէ Մուգդէնը, Կիշինեվը թէ Օդեսան, հայ-Թուրքական ընդհարումները թէ Բալտեան երկրի բացարձակ աւերումը, Բօբրիկովի խայտառակ դէրքը թէ խելագար Դումբաձէի սատրապութիւնը,—այո, ոչ պահպանողական, այլ ժողովրդի վայրագ Թշնամի Դումայի մեծամասնութիւնը ակամայից պիտի լսէ ժողովրդի ձայնը, ստիպված կը լինի իրան հինգամեայ շրջանում—որին այլ ևս չէ սպառնում ցրելու վտանգը—անցկացնել հակառակ իր կամքի օրէնքներ յօգուտ մեծամասնութեան, եթէ... եթէ պարզ արտայայտված ոյժը իր ալիքներով չը ծածկի մինչ այդ նրանց գլուխները...

Ժողովուրդն է և միայն ժողովուրդը, որ առաջ է մղում օրէնսդրութիւնը թէ սահմանադրական, թէ բացարձակ միապետական երկիրներում: Ես իսկոյն յիշեցի 1867 Թւի Անգլիայի ընտրողական իրաւունքի լայնացումը, որ իրագործեց ժողովրդի Թշնամի Դիզլի (լորդ Բիկօնսֆիլդի) մինիստրութիւնը, ռովնեսեւ այդ եր. երկրի ուռշակի յայտնած ցանկութիւնը: Բացարձակ յետադիմական կառավարութիւնը Ալեքսանդր III-ի օրով ստիպված եղաւ զբաղվել գործարանական օրէնսդրութիւնով՝ դրդված բանուորական շարժումից. տես փայլուն ապացոյցներ չափաւորական-հոկտեմբերական պրոֆ. Ի. Օզերովի «Политика по рабочему вопросу» գրքից կամ ժողովրդական հրատարակութիւն՝ «Рабочее движеніе въ Россіи», պ. Պաժիտնովի:

Ուրեմն աշխատեցէք օգնել ժողովրդին իր պարզ ճանաչած գործի մէջ և մի վհատէք ընտրութիւնների նախօրօք սպասած հետևանքներից:

Եւ սկսելով իմ զրոյցս մեծ բանաստեղծի խօսքերով, վերջացնում եմ բանաստեղծիկի ասածով՝ վեհ լուսաբացի աղջամուղջն է այս:

Պետրոս Զաքարեան

«ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Դեռ այս մայիս ամսում, երբ՝ իշխանութեան կարգադրութեամբ՝ փակվեց «Հերմէս» տպարանը, «Մուրճ» ամսագրի բոլոր բաժանորդներին ուղարկվեց ծանուցում՝ հրատարակութեան ժամանակաւոր դադարման մասին: Ամառս հեռանալով քաղաքից, մի շարք անձնական և ընտանեկան հանգամանքների պատճառով, ես անկարող եղայ վերադառնալ Թիֆլիս աւելի վաղ:

Երկար տարիների փորձը և մանաւանդ այս տարվայ անցած-դարձածը հրամայողաբար ստիպում են ինձ վերջ դնել անհատական զոհաբերութիւններով տարվող մի գործի, ինչպիսին է «Մուրճը», որ նիւթական ահագին վնասներ է պատճառել և ինձ: Պէտք է նկատել, որ յարգելի տիկին Վարվառէ Քանանեանը՝ 1902 Թ. յուլիս ամսից ձեռք բերելով այդ ամսագրի հրատարակութեան իրաւունքը նախկին հրատարակիչ Կ. Կրասիլնիկեանից 16,000 րուբլով՝ նաև հոգաց այդ Թւականի դեֆիցիտը (3,000 ր.) ծածկելու մասին: Այնուհետև՝ սկսած 1903 Թ. յունվար ամսից՝ «Մուրճի» հրատարակութեան բոլոր ծանրութիւնն ընկած էր ինձ վրա: Լաւատես դէպի այդ հրատարակութեան լաւագոյն ապագան՝ ես ոչ մի զոհաբերութեան առաջ կանգ չառայ, աշխատելով ամսագիրը դարձնել մեր ժողովուրդը դաստիարակող լուրջ և անկախ մի օրգան, որ անվախ որոնում է ճշմարտութիւնը: Շատ դանդաղ կերպով տարէ-տարի աւելանում էր բաժանորդների Թիւը, որ 1905 Թւականին հասաւ 900-ի—մի Թիւ, որ այնուամենայնիւ անբաւարար էր ամսագրի ծախքերը ծածկելու համար: Այնուհետև ռուսական յեղափոխութիւնը ստեղծեց կեանքի մէջ նոր պայմաններ և հասարակական ոյժերի նոր յարաբերութիւններ: Եռացող կեանքը կենտրոնացաւ օրաթերթերի և բրօշիւրների շուրջը, և բոլոր ամսագրերի բաժանորդները պակասեցին: Բացի այդ ընդհանուր հանգամանքներից՝ հայկական իրականութիւնն ունեցաւ և իր առանձնայատուկ զուտ ասիական վայրագ Թաֆաֆայականութիւնը՝ իր հակահասարակական այլանդակութիւններով, արտայայտված մի ստրկահոգի, խաւար, մոլորված և ժերկանոտ միջավայրում...

Դադարեցնելով «Մուրճի» հրատարակութիւնը՝ մենք մեր բաժանորդներին կուղարկենք № 4-ի այն Թերթերը, որոնք տպված էին «Հերմէս» տպարանի կնքումից առաջ: Մնացած համարների փոխարէն ցանկացողները կարող են ստանալ հետևեալ հրատարակութիւնները՝ իրանց դրամական պահանջի համեմատ. 1) «Հայի Բաբա» 2 հատոր, ճանապարհածախսով 4 ր., 2) «Վշտի ծիծաղ», ճանապարհածախսով 1 ր., 3) Լ. Ս.-ի «Մի քանի օր Արցախում և Սիւնիքում», «Հին ցաւ», «Ժողովրդի կրթական գործը մեզանում», իւրաքանչիւր բրօշիւրը 20 կ., 4) բժ. Գ. Ս.-ի «Վնասակար և օգտակար միկրօբների մասին», 30 կ.: Իսկ այն բաժանորդները, որոնք կուզենան իրանց հաշուի մնացորդը դրամով ստանալ, Թող բարեհաճեն այդ մասին յայտնել ինձ:

Լեւոն Սարգսեան

Թիֆլիս, 24 հոկտ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

Հոկտեմբերի 24-ին, չորեքշաբթի, երեկոյեան ժամը 6-ին, Յովնանեան դպրոցի շինութեան մէջ տեղի ունեցաւ ժողովրդական համալսարանի հայկական դասընթացքների բացումը: Հաւաքվել էին մօտ 200 ունկնդիրներ:

Սեկցիայի վարչութեան կողմից պ. Ա. Խատիսեանը շնորհաւորելով ժողովրդական համալսարանի հայկական դասընթացքների բացումը, յոյս յայտնեց, որ գործը յառաջ կը լինի և ուրախութիւն՝ որ տարբեր ուղղութեան մարդիկ համախմբվել են յօգուտ ժողովրդի գործելու, յանուն գիտութեան:

Ա. Աբեղեան, իբրև քարտուղար, համառօտ հաշիւ ներկայացրեց սեկցիայի աշխատութեան մասին և մի քանի խօսքով բացատրեց ժողովրդական համալսարանի կազմակերպութիւնը Եւրոպայում:

Ապա դասախօսեցին Մ. Մուշյեան՝ քիմիայից և ֆիզիկայից և բժիշկ Վ. Արծրունի՝ առողջապահութիւնից: Պէտք է ասել, որ դասախօսութիւնները կատարվեցին մատչելի լեզուով: Իսկ երէկ երեկոյեան դասախօսեցին Հ. Առաքելեան՝ Արևելքի հին պատմութեան մասին, Գ. Խաժակ՝ պետական իրաւունքի և Ս. Արծրունի՝ քրէական իրաւունքի մասին:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի, հոկտեմբերի 29-ին, Արտիստական ընկ. Թատրոնում հայ դերասանական ընկերակցութիւնը կը ներկայացնէ մեր ալեզարդ դրամատուրգ Գաբրիէլ Սունդուկեանցի «Բաղնիսի քօղչա» 2 գործողութեամբ մի նոր կոմէդիան: Պիէսի նիւթը վերցրած է Թիֆլիսի կեանքից: Յուսով ենք, որ հայ հասարակութիւնը իր ներկայութեամբ պիտի պատւէ իր սիրելի հեղինակի այս նոր պիէսի ներկայացումը:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՈՂՈՊՈՒՏՆԵՐԻ ԴԷՄ

Հոկտեմբերի 10-ին առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան կից առևտրական բաժանմունքի կառավարիչ Սիբելևի նախագահութեամբ կայացել է մի խորհրդակցութիւն նոր տեսակ ապահովագրութեան՝ այն է կողոպուտներ և զինված յարձակումների հարցի մասին: Այդ խորհրդակցութեանը մասնակցել են առևտրի և արդիւնաբերութեան ժողովների խորհրդի ներկայացուցիչը, որը մինիստրութեան առաջ հարց էր յարուցել այդ տեսակ ապահովագրութիւն մտցնելու, ինչպէս որ այդ վաղուց արդէն ընդունված է արտասահմանեան ընկերութիւնների մէջ: Ռուսաստանում այդ տեսակ ապահովագրութիւններ ընդունում էին «Россія» և «Помощь» ապահովագրական ընկերութիւնները, սակայն ապահովագրական պայմանները երաշխաւորութիւններ չէին տալիս, որովհետև կառավարութեան Թոյլատրած գրաւականը, որով ապահովվում էին ապահովագրվողների շահերը, չէր դրվում պետական բանկում: Ժողովների խորհրդի ներկայացուցիչը ի միջի այլոց յայտնել է, որ կողոպուտներից ապահովագրելու կարիքը կարող էր և բոլորովին չը լինել, եթէ իր կառավարութիւնը խոշոր չափով զարգացրած լինէր դրամական փոխադրութիւնների եղանակը: Ներկայումս, ինչպէս յայտնի է, պետական գանձարանը և պետական բանկը յաճախ հրաժարվում են փոխադրելի գումարներ ընդունել այնպիսի տեղերից, ուր ամենից յաճախ են տեղի ունենում աւազակային յարձակումները: Լսելով ժողովների խորհրդի ներկայացուցչի արտայայտած կարծիքը, Սիբելևը նկատել է, որ այդ նոր տեսակ ապահովագրութեան, նոյնպէս և դրամական փոխադրութիւնների եղանակի մասին յարուցված հարցերը կը քննէ նախ ֆինանսների մինիստրը և ապա մինիստրների խորհուրդը: («Нов. Вр.»)

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՑԱՒԵՐԻՑ

Հայոց դպրոցները մի տեսակ անախրոնիզմի ձև են ստացել. ներկայ դրութեան մէջ նրանց կարելի է համարել մի ընդհանուր ազգային ցաւ:

«Քանակով շատ և որակով ոչինչ» այդ ասացուածով ոչ մի հարց և ոչ մի հաստատութիւն չէ կարելի այնպէս ճիշտ կերպով բնորոշել, ինչպէս մեր տարրական դպրոցները. և այդ բոլորը արդիւնք են այն բանի, որ մենք՝ հայերս անկարող ենք հասարակական շահերը բարձր դասել մեր անձնականից: Ուսումնարանը, որ իւրաքանչիւր ազգութեան և հասարակութեան «սրբութիւն սրբոցը» պէտք է լինի, մենք չենք խղճահարվում ծառայեցնել մեր եսին և մեր գրպանին. ահա թէ ինչից է առաջանում մեր ուսումնարանների Թշուառ և ողորմելի դրութիւնը: Մենք փոխանակ զբաղվելու մատաղ սերնդի կրթութեամբ, փոխանակ աշխատելու նրանցից պատրաստել ազնիւ և բարեխիղճ քաղաքացիներ, ընդհակառակն, շատ դէպքերում փչացնում ենք ամբողջ սերունդներ, դարձնելով անմեղ մանուկներին մեր ձեռքին կոյր գործիքներ: Մեր դպրոցներում աննօրմալ պայմաններն այնքան սովորական են, որ մենք շատ դէպքերում անուշադիր ենք Թողնում՝ կարդալով այդ մասին լրագրութեան մէջ:

Բայց այն, ինչ որ կատարվում է Ալեքսանդրապոլի Փրկչի դպրոցում, սովորականից դուրս մի երևոյթ է, որի վրա անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել: Այդ դպրոցի շուրջը գործում են մարդիկ գրգռված կրքերով, կուրացած մոլեռանդութեամբ, և մատաղ աշակերտութիւնն էլ, դարձնելով իրանց ձեռքին խաղալիք, տանում են դէպի անդունդ: Իւրաքանչիւր կողմը, ի հարկէ, աշխատում է յանցանքը բարդել հակառակորդների վրա. օրինակ, ուսուցչական խումբը աշխատում է ապացուցանել՝ թէ այն սարսափելի դեմօրալիզացիան, որ տիրում է այդ դպրոցի աշակերտութեան մէջ, արդիւնք է նախկին աւագ ուսուցիչ Բալայեանի և իր համախոհների ստահակութիւնների, գրգռումների, իսկ ընդհակառակն, դրսի կողմից աշխատում են ապացուցանել, որ դա հետևանք է ուսուցչական և հոգաբարձական կազմի անձեռնհասութեան: Թէ ո՞րն է իսկապէս ճիշտը, դժուար է որոշել.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԴԻԼՋԵՒԱԶ ԳԱՒԱՌԻՑ

(Տեղեկութիւններ և դիտողութիւններ)

V

Վան, 5 սեպտեմբեր

Ամեն անգամ երբ մեր ցաւերի խորը կը Թափանցենք, երբ տիրող ռեժիմից յառաջացած չարիքների հետևանքը եղող վիշտերից կը չարչարուինք, երբ որբանոցների, դպրոցների անկումը կասեցնող միջոցներ կը խորհինք, վերջապէս երբ սովը կը սպառնայ երկրին, և երկրացին ինքզինքն անկարող կը զգայ որևէ կերպով մահուան ճիրաններից ազատուելու,—այս դժոխային պայմանների մէջ, կըսենք, Թիւրքահայը ոչ մի մխիթարութիւն, ոչ մի յոյս, ոչ մի հաւատ, ոչինչ չունի, բայց եթէ իր արտասահմանեան եղբայրակիցների սրտացաւ օգնութիւնը: Նա, որ դարերէ ի վեր իր ձեռքը երկինքն է բարձրացուցած և այնտեղէն է սպասեր ամեն բան՝ և՛ հաց, և՛ լոյս, և՛ ազատութիւն,—այսօր այնտեղէն ալ յուսահատ եղած՝ դատարկ ձեռները ծալած գիրկն է դրած...: Ի՞նչ անել. եթէ բան մը կարողանայ անել՝ պիտի անէ. բացի յուսահատ մարտի մէջ իյնալուց, եթէ Թիւրքանալն իրեն հաց տայ՝ պիտի Թիւրքանայ, բայց Թիւրք գիւղացիին վիճակը որչափ լաւ է մերինէն: Նա հիմա հաց կուզէ, ապրիլ կուզէ, իսկ մենք այդ հացը, այդ ապրուստը ձեզնից է որ կուզենք:

Յանուն Թիւրքահայ սովեալների հանգանակուած գումարները նոյնպէս չեն կատարեր իրենց իսկական դերը: Ճիշտ է, ժողովրդի մէկ մասը կապրի անոնցմով ժամանակ մը՝ մէկ ժամով, երկու ժամով, առ առաւելն 2—3 օրով, մինչդեռ մեծագոյն մասը դրամից էլ անմասն կը մնայ և կը մեռնի (այս ձմեռը գիւղերի մէջ մեռնողներ ալ եղան): Ու մենք ցաւօք սրտի կասենք դարձեալ, թէ այս օգնութիւններն իրենց էութեան մէջ նոյնն են, ինչ Կարմիր Գազանի, սարքած ջարդերից ու կոտորածներից յետոյ, բաժնած Թայիններն էին: Եւ այդ դրութիւնը, սրտի խորին ցաւով պարտաւորուած ենք ասել, կը յառաջանայ հետևեալ հակասական հանգամանքից: Արտասահմանը, յանձին իր յեղափոխական կազմակերպութեան՝ Դաշնակցութեան, մի կողմից մեր Թշուառ ժողովրդի ազատագրութեան գործը կենթադրէ յառաջ վարել, սոսկալիօրէն բռնի միջոցներով ծախել տալով ինչ որ ունինք, չը Թողնելով մեր օջախում ոչ եզ, ոչխար, գոմէշ և ոչ էլ ձիւնածածկ ցանքեր: Եւ այդ ամենը, իբր թէ, ժողովրդին զինելու համար: Մինչդեռ միւս կողմից նոյն իսկ հէնց այդ Թշուառին սովի ճիրաններից ազատելու համար 5—10 ղրուշով միայն օգնութեան կը հասնին:

Բաւ չէ օգնելը. պէտք է իմանալ, թէ ինչպիսի օգնութիւնը դրական արդիւնք կուտայ, ինչպիսի օգնութիւնը չարիքի առաջքը կառնէ՝ գոնէ բաւարար չափով, ինչպիսի օգնութիւնը վերջ կը դնէ սալաֆի ամենաւերիչ անհրաժեշտութեան: Ի հարկէ մենք համոզուած ենք, թէ չը կայ այդ բանի համար արմատական մէկ միջոց. համոզուած ենք, թէ քանի գոյութիւն ունի այս ռեժիմը, անխուսափելիօրէն գոյութիւն պիտի ունենան նաև անոր արդիւնքները: Բայց մեր խօսքն այն է, թէ օգնութիւնը ինչ եղանակներով պէտք է կատարուի, որ յամենայն դէպս, աւելի օգտակար, աւելի տևական նշանակութիւն ունենայ:

Օգնութիւնը այն բնաւորութիւնը պէտք է ունենայ, որ դիւրութիւն տայ գիւղացուն՝ իր արտերը մշակելու, իր քրտինքով ապրելու. ձրի դրամ տալը, նոյն իսկ պատահականօրէն եզ կամ անոր գին տալն այնչափ նշանակութիւն ունի, որչափ ինքն է: Գիւղացին իրական մի օգնութիւն ստանալու համար, ինչպէս տեսանք, կը դիմէ եզան տաւարը ծախելու կամ սալաֆի ամենաւերիչ միջոցներին. դա մի բաղդախնդրութիւն է, որ, ինչպէս ամեն բաղդախնդրութիւն, նրան կը գլորէ անդունդը: Եւ ուրիշ կերպ չէր կարող լինել, քանի որ քրտնաշղախ գիւղացու համար պայմանները անչափ ծանր են: Մենք կը կարծենք, որ, եթէ իրական կեանքի այդ ցուցմունքներով առաջնորդուէր օգնութեան գործը, միայն անպայմանօրէն գիւղացու համար նպաստաւոր սակերով, այդ դէպքում ամենամեծ օգնութիւնը հասցուցած պիտի լինէինք իրեն:

Ենթադրենք թէ (ենթադրենք սալաֆի մասին է մեր խօսքը) գիւղացին 20—30—100, աւելի կամ պակաս, ղրուշի անհրաժեշտ պէտք ունի՝ որովհետև կամ տուրք պիտի տայ, կամ «տկլոզ» և խեղճ ու կրակ «վեր պաղ Թօրվան Թողած, ծեԹկէկ ձագերաց» շոր պիտի առնէ, կամ՝ աւելի յաճախ և աւելի հրամայողական՝ կորեկ, գարի պիտի գնէ նոյն ձագերը կերակրելու համար: Գիւղացին, այսպիսի դէպքերում, անհրաժեշտ դրամը ձեռք բերելու համար կը դիմէ քաղաքացիին կամ գիւղացիին—հային, Թիւրքին կամ քիւրդին—և, յուսահատ, դրակոնական պայմանների յանձնառու կը լինի (20 ղրուշի փոխարէն՝ տալով մէկ չափ ցորեն, որ միևնոյն է՝ 20 ղրուշի փոխարէն՝ 80—100 ղրուշ տալ): Մինչդեռ նոյն այդ գիւղացին, ընդհակառակը, դրական, շինարար օգնութիւն ստացած կըլլար, կըսենք, եթէ Թշուառութիւնը մեղմելու համար արտասահմանից ուղարկված դրամը այնպիսի վիճակի մէջ դրուէր, որ այդ նպատակին ծառայէր (20 ղրուշի փոխարէն ոչ թէ 1 չափ ցորեն, այլ այնչափ տրուէր, որչափ 20 ղրուշի տարեկան տոկոսն է՝ կամ անոր կրկինը): Մասնաւորապէս Ադիլջեւազի համար, ուր եզան տաւարը ծախելը կամ միրիբա լինելը սովորական է, մենք այս կասենք: Ենթադրենք Թէ գիւղացին 4 եզ ունի. պարտաւորուած՝ 2 եզան տաւարը կը ծախէ, այսինքն՝ 4 եզան աշխատանքի արդիւնքը որչափ լինի՝ 2 եզան բաժինը կը ծախէ՝ առնուազն 6, առաւելն 9 լիրայի (նոյնպէս բաղդախնդրութիւն): Արդ, եթէ արտասահմանի հասցուցած օգնութիւնը գործադրուէր այդ բանի համար,—օրինակ՝ մի այսպիսի պայմանով. փոխանակ 9 լիրայի փոխարէն առնելու երկու եզան աշխատանքի ամբողջ արդիւնքը, որ կընէ առնուազն 30 չափ, իսկ առաւելն 80, առնել այդ տասքի կէսը կամ քառորդը՝ նայած ցորենի գնին ու առատութեան բերքին,—այդ դէպքում գիւղացին բաւական Թեթևացած կը լինէր իր ներկայ անելանելի ճգնաժամից:

Միրիբայութիւնը զանազան գաւառների մէջ կը տարբերուի: Սարբ-առէ գաւառակին մէջ միրիբա կը կոչուին անոնք, որոնք աղայի սեփական հողին վրայ կը ցանեն աղայի տուած սերմը, մշակելով աղայի եզներով, գութանով եայլն: Արդիւնքը կը բաժնուի այնչափով, որչափ աղան է «ոգորմած» գտած: Ադիլջեւազի մէջ եթէ հողը սեփականութիւն է գիւղացուն, միրիբայութիւնն այս կերպ է. քաղաքացի հայը, Թիւրքը կամ քիւրդը գիւղացիին կուտայ սերմ, եզներ և երկրագործական գործիքներ, արդիւնքն՝ ուղիղ հաւասարապէս բաժնելու պայմանով (այլ գաւառների մէջ տուողը սերմ հանելէն յետոյ՝ նոր մնացածը, ինչպէս կըսեն՝ «Աստծու տուածը», հաւասար բաժին կընեն): Մենք կը կարծենք, որ եթէ արտասահմանի օգնութիւնը գործադրուէր այս նպատակի համար, փոխանակ արդիւնքի կէս մասն ստանալու՝ կարելի է պայմանաւորուել քառորդով կամ $^{1}/_{8}$-ով և կամ սերմի կրկինը վերցնելով:

Արդ՝ մենք համոզուած ենք, թէ Ադիլջեւազի համար միմիայն 2000 լիրայի այս կերպ գործածութիւնը դժոխային տարջանքները մեղմելու համար խիստ մխիթարական արդիւնք պիտի տայ իւրաքանչիւր տարի: Օրինակ՝ եթէ 20 լիրայով 4 եզներ, սերմ և գործիքներ տրուին մէկ գիւղացու, մինչ երկու տարի նա կարող կը լինի առանձինն եզներ ունենալ և ինքնիրմով ապրիլ: Եւ ահա թէ ինչպէս.—4 եզներով նա կարդիւնաբերէ առնուազն 100 չափ ցորեն, որմէ 8 չափը սերմի և սերմի կրկինը պարտքին տալով մնացեալ 92 չափը իրեն հասնելիք բաժինն կազմող է և ապրիլ, և երկու եզ ևս աւելցնել, որով 4 եզը կը լինի 6, և այսպէս միւս տարին 10, և շարունակաբար: Այդ պարագային կարելի է իրմէ առնել 4 եզը՝ ուրիշի մը տալու համար, և 6-ը կը լինի իր սեփականութիւն:

Վերջապէս, մեր կարծիքով, մեր առաջարկած օգնութեան եղանակը աւելի դրական է, որովհետև իրականութեան ցուցմունքներն ունի իրեն հիմք: Ընթերցողին կը Թողունք եզրակացնել այն բարերար հետևանքները, որոնք պիտի յառաջանան այս կերպ գործելէն: Եւ որպէսզի կանոնաւոր հիմքերի վրա դրուի գործը, պէտք է կազմակերպուած ոյժով յառաջ վարել գործը: Ըստ մեզ՝ Թիւրքահայերն օժանդակող այդ կազմակերպութիւնը բաղկացած պիտի լինի երկու գլխաւոր տարրերից. 1) արտասահմանեան տարր, որի կոչումը պիտի լինի հայթայթել իր գիտցած ներքին միջոցներով դրամը, 2) երկրային, որի պարտականութիւնը պէտք է լինի ուսումնասիրել երկրի զանազան գաւառներին, գիւղերին, նոյն իսկ անհատներին օգնութեան հասնելու յարմարագոյն եղանակը, ուղղակի կերպով հսկել անխտրական գործադրութեանը վրա և վերջապէս տարուէ-տարի կամ վեց ամիսը մի անգամ մանրամասն և ճշգրիտ հաշուեկշռի հետ միասին տեղեկագրել արդիւնքը:

Առ այժմ բաւ համարելով այսչափը՝ մեզ կը մնայ խնդրել պատուարժան խմբագրութենէդ առանձին ուշադրութիւն դարձնելով սոր վրայ՝ հայ մամուլի մէջ արծարծել, լուսաբանել ու զարկ տալ անյետաձգելի անհրաժեշտութիւն ներկայացնող օգնութեան գործին:

Ախպէրանց-Արիւն

բայց իրողութիւնն այն է, որ այդտեղ վտանգի է ենթարկված մի ամբողջ սերնդի կրթական գործը, և դրա առաջը պէտք է շուտով առնել։ Անհրաժեշտ է ստեղծել նոր պայմաններ և նոր կարգեր, այլապէս ոչ մի նշանակութիւն չունի, որ ձեւականապէս դպրոցը գոյութիւն ունենայ առանց որևէ դրական արդիւնք տալու. իսկ թէ այդպիսի պայմաններում ոչ մի դրական արդիւնք չէ կարելի ստանալ, դա այնքան պարզ է, որ այդ մասին կասկածել անկարելի է։

Այն ընդհանուր արհամարհանքը, նոյնիսկ ատելութիւնը, որ տիրում է աշակերտների մէջ դէպի ուսուցիչները, դարձրել է ուսուցչի դրութիւնը այդ դպրոցում վերին աստիճանի անտանելի։ Ուսուցիչը ստիպված է այդտեղ մի տեսակ ծաղրածուի դեր կատարել. եթէ նա աշակերտների բոլոր պահանջներն ու քմահաճոյքները չը կատարի, ոչ միայն նրան չեն լսում, այլ և աղմուկ-աղաղակով ստիպում են դասարանից հեռանալ. բայց աշակերտների պահանջները լինում են այնպէս տարօրինակ, որ ուսուցիչը անկարող է կատարել։ Ուսուցչի ներկայութիւնը դասարանում և կամ մի այլ տեղ ոչ մի նշանակութիւն չունի աշակերտների համար. շնորհիւ զանազան դրդումների, որով պարապում են մի քանի անբարեխիղճ մարդիկ, աշակերտութիւնը նայում է ուսուցչական խմբին թշնամական աչքով և ոչ մի ցանկութիւն չէ ցոյց տալիս որևէ բան սովորելու։

Ես աւելորդ եմ համարում մի առ մի պատմել այն բոլոր վերին աստիճանի ցաւալի և անպատուաբեր դէպքերը, որոնք կարճ ժամանակամիջոցում կատարվեցին այդ դպրոցում (եթէ հարկաւոր լինի՝ մանրամասն կարելի է պատմել). բայց այստեղ պէտք է շեշտել այն, որ այդ դպրոցում, շնորհիւ ներքին խռովութիւնների և գայթակղեցուցիչ օրինակների, աշակերտութիւնը հասել այնպիսի այլասեռման, որ ասել թէ այդտեղ, առանց հիմնական բարեփոխութիւնների, կարելի է որևէ դրական հետևանքի հասնել է ուսուցչութիւն անելով, կը լինի կատարեալ ինքնախաբէութիւն։ Այդ պատճառով էլ տողերիս գրողը, որ հրաւիրված էր այդտեղ ուսուցչական պաշտօնով, մի քանի օր ուսումնարան յաճախելուց յետոյ՝ ստիպված եղաւ հրաժարվել։

Այստեղ յիշելով մի քանի բացասական կողմեր աշակերտների կեանքից, ես բոլորովին նպատակ չունեմ մեղադրելու աշակերտութիւնը, որովհետև նա միմիայն կոյր գործիք է զանազան շահախնդիր և հացկատակ մարդկանց ձեռքին, այլ այս մի քանի տողով կը ցանկանայի ընդհանուր ցաւ դարձած այս խնդիրը դնել հրապարակի վրա, որպէսզի ձեռնհաս մարդիկ որևէ բաւարար լուծում տային դրան։ Եթէ մենք մօտիկ ապագայում չը կարողանանք գտնել միջոց, որով ընդ միշտ վերջ դրվէր դպրոցական հարցերում անձնական հաշիւներով առաջնորդվելուն, խնամութեան... մեր դպրոցները երբէք իրանց վեհ նպատակին չեն կարող ծառայած լինել։

Մկրտիչ Սարգսեանց

ՆՈՒԽՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նուխու հայոց դպրոցներում երկու տարի շարունակվող խառնակութիւնից յետոյ վերջապէս սկսվել է կանոնաւոր դպրոցական կեանք, կանոնաւոր ուսում, շնորհիւ Նորընտիր հոգաբարձութեան եռանդուն ու անձնուէր գործունէութեան, ժողովրդի վստահութեան դէպի նրան և գլխաւորապէս՝ դպրոցական ղեկավար Խանոյեան ամուսինների ու սրանց կազմած ուսուցչական խմբի ջանքերի։ Գուցէ Նուխու դպրոցական պատմութեան մէջ այսպիսի գաղափարակից, միասիրտ ուսուցչական խումբ եղած չը լինի, և թէև վերջին տարիների երկպիւղը այնչափ է ազդել նուխեցիների վրա, որ նրանք անկարող են այժմ «սատանայի ականջը խուլ» դարձուածքից խուսափել, բայց և այնպէս փաստն այն է, որ ամեն տեղ և ամեն ժամանակ հիմնաւոր ու ռէալ ծրագիրը, լուրջ ու ազնիւ վերաբերմունքը գործին՝ յաղթող են ու գերադաս։ Այս տեսակէտով արդէն սկիզբը դրված է գործի, այժմ ի մի սիրտ պէտք է աշխատել չը սպանել այդ գործը, այլ մոռանալով մանաւանդ անձնականն ու եսականը, մանրամունր, հին ու նոր հաշիւները, խմբվել հոգաբարձական և ուսուցչական կազմի շուրջը և ձեռք-ձեռքի տուած տանել հասարակական այն սուրբ գործը, որ դպրոց, ուսում է կոչվում։

Երբ նորընտիր հոգաբարձութիւնը գործի կպաւ, շատերը յոյս չունէին այս աջող ելքին, որովհետև դպրոցի դրամարկղում՝ դրամ, ժողովրդի սրտում՝ հաւատ չը կար, խէթն ու նախանձը բոյն էին դրել իւրաքանչիւրի մէջ. բայց դպրոցական տարին մօտեցաւ, դպրոցի դռները լայն բացվեցին ուսումնատենչ մանուկների առաջ և ահա այժմ դպրոցն ունի 450 աշակերտ-աշակերտուհի, իսկ մօտ 50 հոգի էլ մերժվեցին, լաւ գիտացէք, անհնարաւորութեան պատճառով։ Դպրոցի ամբողջ տարվայ բիւջէն նախագծված է այսպէս. մուտք—4700 ր. (Թոշակներից 3000 ր., Քիշ վանքից 300 ր., 2 եկեղեցիներից 400 ր., քաղաքից 200 ր., ժամհար Աւետիսի կտակից 200 ր., ներկայացումներից և տեղացիներից նուէր սպասվում է 600 ր.) և ելք—5610 ր. (ուսուցիչներին ռոճիկ 4750 ր., ծառայ, վառելիք և այլն 860 ր.). պարզ է, որ բոլոր հնարաւոր աղբիւրները ի նկատի են առնված, թէև, մեր կարծիքով, ժողովրդի և քաղաքացիների նպաստի աղբիւրը շատ սեղմ է, պէտք է ընդլայնել։ Բայց և այնպէս մնում է բաց մօտ 1000 րուբլի, մի հանգամանք, որ անշուշտ մեծ հոգս չը պէտք է պատճառէ հոգաբարձութեան, քանի որ կարելի է յուսալ դրսից նուխեցիների նպաստի վրա, մի գումար, որ նրանք չեն զլանայ իրանց դժբաղդ քաղաքի միակ մխիթարութիւն դպրոցին, և անշուշտ շատերը յիշում են նրանց հրապարակական խոստումն ու որոշումը դեռ ևս մայիսից՝ «Նպաստել բարոյապէս և նիւթապէս ուսումնարանների վերաբացվելուն» («Ժայռ», 1907 թ. № 20)։

Դէհ, ուրեմն, եռանդոտ երիտասարդներ, սկսեցէք ձեր ձեռնարկութիւնը. իսկ ժամանակն է, շտապեցէք. մի մոռանաք, որ մեր զաւակների համար քրտինք թափող ուսուցիչները նոյնչափ կարօտ են իրանց աշխատանքների վարձին, որչափ մեր զաւակները—ուսման, և լաւ յիշեցէք, որ դուք մի մեծ պարտիք ևս ունիք—տղայոց դպրոցի շէնքը. պէտք է լուրջ մտածել այդ մասին։

Իքս

ԹԻՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Բագուից մէկ պարոնից, որը չէ ուզում յայտնել իր անունը—հինգ րուբլի։ Առաջվայ ստացածների հետ ունենք 1828 ր. 19 կ.։

ԲՆԱԿԱՆ ԱՂԷՏՆԵՐ

III

Նոր-Բայազէտ, 20 հոկտեմբերի

Բնական աղէտներից մէկն էլ անժամանակ տեղացող առատ անձրևն է, որը նոյնպէս վնասում է գիւղատնտեսական ձեռնարկութիւններին և հողագործական աշխատանքներին ու խանգարում թէ ցանքսերին և թէ հունձին և կասելուն։ Անձրևոտ ու խոնաւ ժամանակներում, օրինակ՝ ցանքսերի միջոցին, բացի այն՝ որ օրերով ու շաբաթներով աշխատանքն ուշանում է, նոյնիսկ ցանքսը տեղի է ունենում աննորմալ կերպով. այսպէս՝ ցանում են լոկ ցեխի մէջ, շատ խոնաւ, գրեթէ ճահճացած հողաբաժիններում, որտեղ հացաբոյսի հետ միասին աճում և զարգանում են շատ վնասակար բոյսեր, օրինակ՝ փշեր, աւելուկներ, շերեփուկներ և այլ վայրենի խոտաբոյսեր, որոնք արգելք են դառնում հացաբոյսի կանոնաւոր զարգացմանը, խեղդելով նրա արմատը, մանաւանդ նրա երաշտ տարիներում (փակագծում պէտք է ասել, որ մեր գաւառում հողագործը քաղհան անելու սովորութիւն չունի)։ Այն ինչ՝ բարեյաջող եղանակներում կատարվող ցանքսը դուրս է գալիս մաքուր, և աճում-զարգանում է միմիայն ցանված հացաբոյսը, առանց աւելորդ և վնասակար բոյսերի։

Եւ այդպիսով՝ անժամանակ և աւելորդ անձրևներն արգելում են նաև հնձելու գործողութեանը և փչացնում հնձվածը։ Օրինակ՝ մեզանում հազիւ թէ այնպիսի տարի լինի, երբ խոտաքաղի միջոցին անձրև չը գայ. այս տարի, հէնց որ գերանդին սկսեց գործել դաշտերում, անմիջապէս սկսվեցին յորդ անձրևները, և խոտը մնաց սարերում թափված։ Այդ աննպաստ հանգամանքի պատճառով հացաբոյսը շաբաթներով և նոյնիսկ ամիսներով անձրևների և կարկտի տակ անկասել ու կիսաբաց մնաց։ Հէնց այժմ, երբ արդէն հոկտեմբեր ամսումն ենք և երբ ամեն տեղ հողագործ դասն արդէն վերջացրել է իր կալոցքը, մեզանում դեռ ևս հացաբոյսը մնում է անկասել, հաշանները «կիսախոյան» ու կիսածեծ, քանի որ ամեն օր անձրև և ձիւն է գալիս, արևի երես չենք տեսնում, որպէսզի հացաբոյսը չորանայ և կալսվի։ Թող զարմանալի չը թուայ, եթէ ասեմ, որ մինչև անգամ հոկտեմբերի կէսին դեռ ևս մեզանում արտեր կային առանց քաղելու, որովհետև եղանակները խիստ աննպաստ էին և այդպիսի արտերի վրա մի քանի անգամ ձիւն եկաւ ու հալվեց, որովհետև նրանք ընկած էին սարերի ստորոտներում, որտեղ անձրևները, ձիւնը միշտ անպակաս են, հէնց որ եղանակները մի փոքր անբարեյաջող են լինում։ Եւ եղանակների այդպիսի ազդեցութեան տակ, երբ մի քանի շաբաթով ուշանում է կալսելը (իսկ մեզանում անձրևներն ամիսներով են տևում), արդէն հացի պահանջը մեծանում է և գինը կրկնապատկվում։ Օրինակ՝ այս րոպէիս, երբ մեր հացաբոյսը դեռ չենք կալսել և շատերը, նոյնիսկ մեծ ռանչպարներից, սեփական հացատիկներ չունենն իրանց ընտանիքը կերակրելու համար,—բոլորը անխտիր ստիպված են շուկայում գնելու ալիւրը, որի պաշարը ներկայումս այնքան քիչ է (կարծելով որ կէժանանայ կալոցին և միաս կարող են անել՝ ծախողները մեծ քանակութեամբ չեն բերում), որ գնողները կռւով-դաւով են իրար ձեռքից խլում... Հէնց այդ հիման վրա՝ այսօր մեր բազարում գնողներն ալիւրն իրար ձեռքից են խլում, որովհետև օրերով չէ էլ ճարվում։ Այս անախորժութիւնների պատճառով քաղաքապաններին պատուիրված է, որ հսկեն ալիւրավաճառների վրա, որպէսզի սրանք շատ մեծ քանակութեամբ—տոպրակներով կամ խալվարներով—չը ծախեն հարուստներին, այլ քիչ քանակութեամբ—պուդերով—տան բոլորին անխտիր՝ թէ ունեւորին, թէ չունեւորին, թէ որբերին և թէ այրիներին, որպէսզի բոլորը հաց ունենան և սովի չը մատնվեն անտէր ու անճարները... Սակայն ունեւորը դեռ փող ունի հաց առնելու և եօլա գնալու, իսկ աղքատը, անճարը։

Որսորդ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԹՌՈՒՑԻԿ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մեղրի 15 հոկտեմբերի

Մեղրին լաւ գիւղ է. օդը մաքուր, ջուրը մաքուր, հրաշալի տեսարաններ։ Չը նայելով որ անտեսապէս անբարեյաջող պայմանների մէջ է դրված նա, այնուամենայնիւ մտաւորապէս կարողացել է խիստ առաջ գնալ. գրեթէ բոլորը գրագէտներ են, շնորհիւ իրանց երկդասեան դպրոցի, որ միշտ բաց է եղել, երբ հնարաւորութիւն է եղել։ Հասարակական կազմակերպված դրութիւնը աչքի է ընկնում ամեն քայլափոխում. ճանաչում են իրանց իրաւունքները և օգտվում են նրանցից. թէև կան գաղտնի մութ դէմքեր, որոնք նկատելի կերպով շարունակում են իրանց շահագործութիւնը, սակայն այդպիսիները շատ քիչ են և շատ աւելի անզօր, քան ուրիշ գիւղերինը. այդպիսով ոչ մի համեմատութիւն չէ կարելի դնել Արարատեան դաշտի որևէ գիւղի և Մեղրիի միջև։ Զարմանալի է, որ հեռու սարի խռնում ընկած այսպիսի մի գիւղ հնարաւորութիւն է ստեղծել մտաւորապէս առաջ գնալու և իշխելու գրեթէ իր շրջակայ բոլոր գիւղերի վրա։

Առաջին անգամ եմ պատահում մի գիւղի որտեղ հայհոյանքը, արբեցողութիւնը շուայտութիւնները, մսագործների ոտնձգութիւնները հասարակական վճռով վերացված է։ Գիւղ մտնես և հայհոյանք չը լսես. սա խօսք տարօրինակ է։ Սակայն այդպէս են Մեղրին, և ի զուր չէ, որ ճանապարհորդներից շատերը «հայկական Պարիզ» են անուանել այդ փոքրիկ Մեղրին (պրինց Նապոլէոնի և ուրիշ շատերի խօսքերը)։ Եթէ չը լինէր ճանապարհի անյարմարութիւնը, եթէ մեղրեցին կարողանար իր արիւն-քրտինքով մշակած այգու պտուղները վաճառքի հանել, նա անպայման նաև տնտեսապէս կիշխէր իր շրջակայ բոլոր գիւղերի վրա, կը մրցէր ուրիշ բարեյաջող պայմանների մէջ դրված շատ մեծ գիւղերի հետ։

Ժողովրդի գիտակից լինելու պարզ ապացոյցը նրա դպրոցն է, որ միշտ բարձր է եղել և փայլուն հետևանքներ է տուել, քան որևէ ուրիշ ծխական երկդասեան դպրոց։ Մինչև այժմ այդ դպրոցի վարիչները, չնչին բացառութեամբ, եղել են տեղացիներ. այս տարի տեղացիներից, բացի քահանայից, և ոչ մէկը չը կայ։ Այդ առիթով բարձրացված աղմուկը գրեթէ դադարել է, բայց նրանք յիրաւի իրաւունք կունենան բողոքելու, եթէ նորեկները իրանց վրա դրված յոյսը չարդարացնեն։ Դպրոցի դասերը սկսվեցին սեպտեմբերի 3-ից և շատ շուտով կանոնաւորվեցին, և այդ՝ շնորհիւ այն հանգամանքի, որ լրիւ էր ուսուցիչների թիւը և անհրաժեշտ դասագրքերն ու դասական այլ պիտոյքները բերված էին ժամանակին. պակաս էր միայն վարժուհին, որի դասերը, ձեռագործի 12 դաս չը հաշւելով, տարել են ուսուցիչները։

Վերջերս պատահած մի անակնկալ սպանութիւն, գրգռելով հարևան Թուրքերի տրամադրութիւնը, բաւական արգելք հանդիսացաւ ճանապարհների հաղորդակցութեանը, այնպէս որ երկու շաբաթից աւելի կտրված էինք դրսի աշխարհից։ Այստեղ ևս մեղրեցիները ապացուցին, որ իրանք կատարելապէս հաւատարիմ և գիտակից հարևաններ են. հասարակական ժողով կազմելով, նրանք գտան սպանողին և յանձնեցին դատարանին։ Սպանվածը Օրդուբաթի շրջանի մի Թուրք գիւղացի էր. սպանութիւնը կատարվել էր այգում. դիակը թողված է եղել հէնց սպանողի այգում։ Թուրքերը, նկատելով մեղրեցիների ազնիւ վարմունքը, հանգստացան և շնորհակալութիւն յայտնեցին։ Եւ դէպքը անցաւ առանց բարդութիւնների։

Մեղրիի և շրջակայքի համար անհրաժեշտ է ունենալ մի դեղատուն և մի բժիշկ։ Հիւանդութիւններ շատ կան, տարածված է ջերմախտը. համարեա ամեն օր դպրոցի աշակերտներից 5—6 հոգի կապտած և այլագունած տուն են գնում։ Հացի գինը հետզհետէ բարձրանում է. ալիւրի պուդը 2 ր. 50 կոպէկից չէ իջնում։ Պէտք է կարծել, որ հասարակութիւնը կը մտածէ և այդ մասին։

Ա. Ղարիբեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի ժամ. գեներալ-նահանգապետը կովկասեան զինուորական-նահանգական դատարանին է յանձնել Գօրու գաւառի Ջէմօ Նիկոզի գիւղի բնակիչ Եստաֆի Կարաշվիլուն, Շինդիսի գիւղացի Բագրատ Խուցիշվիլուն, Մօզդվրեկիսի գիւղի բնակիչներ Գիգուցա Կախիաշվիլուն և Նիկօ Եղիշերվիլուն, որոնք մեղադրվում են 1905 թ. նոյեմբեր ամսին Շինդիսի առնուակէր Իվան Սարանաձէին, 1906 թ. սեպտեմբերին Շինդիսի շինական վարչութեան գրագիր իշխան Սիմէոն Թերիէվին և սրա որդի Իվանին, նոյն ամսում Դվանի գիւղում կալուածատէր Եասօն Պավլէնովին սպանելու և ուրիշ շատ յանցանքների մէջ։

◆ Թիֆլիսի առևտրական դպրոցի դասատու Արուլաձէն խնդրամատոյց է եղել Թիֆլիսի նահանգապետի առաջ, որ իրան թոյլատրվի հրատարակել Թիֆլիսում ամենօրեայ քաղաքական-տնտեսական և հասարակական-գրական լրագիր «Кавказовѣдѣніе» անունով՝ շաբաթաթերթ և ամսաթերթ յաւելուածներով։

◆ Ինչպէս յայտնի է, Թիֆլիսն ունի 17 դեսեատինից աւելի նաւթի հողաբաժիններ, որոնք գտնվում են Նաւթլուղի մօտ։ Այստեղ մի քանի տեղերում փորել էին ջրհորներ, որոնց մակերևոյթին նստում էր նաւթ, որից օգտվում էին շրջակայ բնակիչները։ Մի քանի տարի առաջ, պայմանագրով, յիշեալ հողաբաժինների կէսը կապալով տրվեց Բագուի վաճառական Գասպար Իվ. Տէր-Մարգարեանին, որ պարտաւոր էր վիշկաներ շինել։ Տէր-Մարգարեանը աշխատանքների մի մասը կատարեց, բայց հայ-թուրքական ընդհարումների ժամանակ բոլոր շինուածքը Բօրչալուի Թուրք խուժանը գետնին հաւասարեցրեց։ Վերջին ժամանակներս բուրօվոյ աշխատանքները վերսկսվեցին։ Հոկտ. 24-ին քաղաքային վարչութիւնն են մտել մի քանի նաւթլուղեցիներ, որոնք յայտնել են, որ Տէր-Մարգարեանի նաւթահորերից նաւթ արդէն դուրս է գալիս, իսկ երբեմն-երբեմն խփում է ֆօնտանի նման։ Ուժը առայժմ թոյլ է։ Նաւթը ջրախառն է։ Մի քանի մասնաւոր մարդկանց հողաբաժիններում, որոնք ընկած են քաղաքային հողերի շարքում, նոյնպէս նաւթ է երևացել։

◆ Մ. Ի. Թամամշեանի երկրորդ դասախօսութիւնը արևելեան կրօնի պատմութիւնից, որը կայանալու էր այսօր կովկասագիտական բարձր կուրսերում, դասախօսի հիւանդութեան պատճառով յետաձգվում է և կը կայանայ վաղը, շաբաթ, հոկտեմբերի 27-ին։

◆ Ժանտախտի և խոլերայի դէմ մաքառող գլխաւոր մասնաժողովի որոշմամբ՝ Թիֆլիսի նահանգը յայտարարված է խոլերայից անբարեյաջող։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը առաջարկել է սանիտարական-բժշկական տեսուչ պ. Կ. Ստեփանեանին, տեխնիկ Լիսիցեանին և զինուորական ատեանում ծառայող Մամուլովին՝ հրաժարական տալ, եթէ ցանկանում են պահպանել ձայնաւորութեան կոչումը, կամ ընդհակառակն հրաժարվել այդ կոչումից։

◆ Հոկտ. 24-ին քաղաքային վարչութեան անդամներ Ա. Խատիսեան և Ն. Ե. Արղութեան-Երկայնաբազուկ, բժշկական-սանիտարական տեսուչ Կ. Ստեփանեան, մթերքների գլխաւոր վերահսկիչ Բ. Ս. Բաբով և մի քանի ուրիշները դիտել են քաղաքային սպանդանոցը։ Նրանք մտադիր են միջոցներ ձեռք առնել՝ սպանդանոցի բազմաթիւ պակասութիւնները վերացնելու համար։

◆ Մէլիտոն Անվելաձէն դիմել է Թիֆլիսի նահանգապետին, խնդրելով թոյլատրել իրան հրատարակել Թիֆլիսում վրացերէն լեզուով երկշաբաթաթերթ «Գանաթլեբա» (Կրթութիւն) անունով։

◆ Այժմ արդէն կարելի է որոշ ասել, որ «Լաշէ» կայարանի մօտ պօստային գնացքը կողոպտելու մանրամասնութիւնները բացված են։ Տարած ընդհանուր գումարը 150 հազարից անցնում է։ Հոկտ. 22-ին ձերբակալել են Բէլօգօրի գաւառամասի 8 գիւղացիների, որոնք, ինչպէս պարզվել է, ապաստարան և ուտելիք են տուել գնացքը կողոպտող աւազակներին։

◆ Երէկ, առաւօտվայ ժամը 6-ից մինչև ցերեկվայ ժամը 2-ը, խուզարկութիւն էր տեղի ունենում քաղաքային վարկի ընկերութեան կառավարիչ Պօղոս Ստ. Ղամբարեանի բնակարանում, որ գտնվում է Պետրոս Մեծի փողոցում։ Խուզարկութեան պատճառը և հետևանքը առայժմ մեզ յայտնի չեն։

◆ Մի բնորոշ կէտ Թիֆլիսի քաղ. վարչութեան գործունէութիւնից։ 1897 թ. Թիֆլիսի ինժեներական վարչութիւնը դիմեց քաղաքային վարչութեան և խնդրեց յայտնել՝ ո՞ւմն է պատկանում այն 1 դես. 1340 քառ. սաժէն հողը, որ գտնվում է 7-դ քաղաքամասում։ Քաղ. վարչ. պատասխանեց՝ քաղաքին։ Այն ժամանակ ինժեներական վարչութիւնը հարց տուեց քաղ. վարչութեան՝ կարօ՞ղ է արդեօք քաղաքը այդ հողը ծախել զինուորական վարչութեան և ի՞նչ գնով։ Քաղաքային վարչութիւնը որոշեց. կարող է ծախել իւրաքանչիւր քառ. սաժէնը 5 րուբլով։ Դրանով էլ գրագրութիւնը վերջացաւ և յիշեալ հողի մասին մոռացութեան տուին։ Մօտ օրերս գործավարի օգնականը, քրքրելով հին թղթերը, գտնում է այդ գրագրութիւնը և հարց է տալիս. ո՞ւմ է պատկանում հողը այժմ։ Պաշտօնապէս հարց տրվեց քաղաքային վարչութեան և քաղ. երկրաչափից պատասխան ստացվեց. հողաբաժինը ահա տասը տարի է, որ տիրում է զինուորական ինժեներական վարչութիւնը։ Այն ժամանակվայ գներով հողը արժէր 20,000, իսկ այժմեան պայմաններում նրան տալիս են 40,000 րուբլի։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոկտեմբերի 24-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Լազարեվսկի և Ժանդարմսկի փողոցների անկիւնում 3 զինված չարագործներ յարձակվել են պարսկահպատակ Հուսէյն Թաղի-օղլու վրա և մահվան սպառնալիքով խլելով նրանից 150 ր. փող և արծաթէ ժամացոյցը 7 ր. արժողութեամբ՝ փախուստ են դիմել և անյայտացել։ Շնորհիւ ոստիկանութեան ձեռք առած եռանդուն միջոցների՝ 2 կողոպտիչներ ձերբակալված են, որոնք են՝ Արտ. Աֆրիամով և Արշակ Հայրապետով. վերջինը, ինչպէս պարզվեց, Թիֆլիսի գեն. նահանգապետի կարգադրութեամբ աքսորված է եղել Վեատկի նահանգը, որտեղից փախել է։

—

Հոկտեմբերի 24-ին, գիշերվայ ժամը 12-ին, Տերենտիևվի օղլի պահեստի կառավարիչ Տէր-Աստուրովը յայտնել է 1-ին քաղաքամասի պրիստաւին, որ ալբրտ մանածողներ Գ. Սուլխաշվիլին և Գ. Մօսիեանցը կոտրելով երկաթէ դրամարկղը՝ գողացել են 545 րուբլի։ Սուլխաշվիլին ձերբակալված է, իսկ Մօսիեանցը անյայտացել է։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Դիպլօմատիական շրջաններում և Ներքին գործերի մինիստրութեան մէջ յաճախ կերպով խօսում են, որ արտաքին գործերի մինիստր Իզվոլսկու դիրքը սաստիկ խախտված է, որ նրա հրաժարականը հերթական խնդիր է դարձել։ Նրա հրաժարականը շաղկապում են Պարսկաստանի ռուսաց գործերի լիազօր Հարտվիգի միջադէպի հետ, որի առիթով Իզվոլսկու դէմ զօրեղ պայքար է յարուցվել Բեռլինի ազդեցիկ շրջաններում։ Հարտվիգի յայտնի միջադէպից անմիջապէս յետոյ արտաքին գործերի մինիստրը առաջարկեց նրան հրաժարական տալ, բայց Հարտվիգը, իր բարձր կապերի շնորհիւ, Իզվոլսկու կամքի հակառակ, մնաց իր պաշտօնում։ Իզվոլսկին այդ բանը համարեց որպէս անվստահութեան արտայայտութիւն դէպի իրան և իսկոյն հրաժարական ներկայացրեց։ Սակայն նրա հրաժարականին այն ժամանակ ընթացք չը տուին։ Իսկ այժմ նրա հրաժարականը համարվում է հաւանական։

◆ 1907 թւի եկամուտների նախահաշուի մէջ առաջ բերված աղբիւրներից մի քանիսի մուտքը այժմվանից արդէն գերազանցում է նախորոշված չափից։ Մանաւանդ գերազանցում են նաւթաբեր հողաբաժիններից ստացված կապալադրամները. օրինակ՝ ամբողջ 1907 թուականում սպասվում էր 9 միլիոն րուբլի եկամուտ, մինչդեռ 8 ամսվայ ընթացքում միայն ստացվել է 11 միլիոն րուբլի։ Գինու մենաշնորհից ստացված եկամուտը ևս, համարեա, նոյնքան չափով գերազանցում է։

◆ Ի նկատի առնելով պետական գանձարանի նիւթական ծանր կացութիւնը, մինիստրութիւնը նորից վճռել է ներկայացնել 3-րդ Պետական Դումային նոր տուրքեր մտցնելու նախագիծը (էլեկտրական ուժի և այլն), որը մերժված էր 2-րդ Պետական Դումայի ֆինանսական մասնաժողովի կողմից։ («Ст. Ут.»)

◆ Գիւղացիական բանկի մէջ ծառայող բոլոր կանայք արձակված են իրանց պաշտօնից, որովհետև հրաժարվել էին առանց վարձատրութեան երեկոյեան աշխատանքներ կատարել։ («К. М.»)

◆ «Утр. Россіи» լրագրի խմբագիրը՝ «Ինչպէս ես դարձայ սենատոր» վերնագրով ֆելիէտօնը տպագրելու համար՝ քրէական պատասխանատուութեան է ենթարկվում 106-րդ յօդուածի հիման վրա (կայսրի պապերին անուանարկելու և կայսերական ցեղի անդամների մասին (1024-րդ յօդ.) առանց կայսերական պալատի մինիստրի թոյլտուութեան տեղեկութիւններ տպագրելու համար)։

◆ Հոկտեմբերի 7-ին Նովօգրուդկայում հրդեհ է տեղի ունեցել, որը տևել է ութը ժամ։ Բոցը, քամու շնորհիւ, արագութեամբ անցել է հարևան փայտէ տանիքներ ունեցող շինութիւնները։ Հրդեհաշէջները անզօր են եղել հրդեհի առաջն առնելու։ Այրվել է 103 տուն, բազմաթիւ շինութիւններ և շարժական կայքեր։ Վնասը հասնում է մօտ կէս միլիոնի։

◆ Ռուսաց սինօդը հոկտեմբերի 13-ի իր նիստում որոշել է Պետերբուրգի հոգևոր ճեմարանի նախկին դօցենտ Միխայիլ վարդապետին, որը իր գրական և քաղաքական գործունէութեան համար աքսորված էր վանք և ինքնագլուխ կերպով հեռացել էր այնտեղից, յանձնել ֆինլանդական Սերգիյ եպիսկոպոսին՝ Վալաամսկի վանքը աքսոր ուղարկելու համար, արգելելով նրան միևնոյն ժամանակ և գրական ու քաղաքական գործունէութիւնից։ («У. Р.»)

◆ Մօգիլևում վճարները չը մուծելու պատճառով գիւղացիական բանկը աճուրդի է ենթարկել 180 գիւղացիական հողաբաժիններ։ («Рѣчь»)

◆ Մոսկվայում կազմակերպվում է պաշտօնաթող և պահեստի զինուորականների համառուսական միութիւն։ («Рѣчь»)

◆ Մօտ օրերս արդարադատութեան մինիստրը շրջաբերականներով հրամանագրել է դատաստանական պալատների դատախազներին, որ այսուհետև քրէական օրէնսգրքի 3-րդ մասի 103-րդ և 106-րդ ու 2-րդ մասի 107-րդ յօդուածների մէջ նախատեսված պետական յանցանքների վերաբերեալ գործերը, որոնց համաձայն մինչև այժմ ձևական հարցաքննութիւնները կատարում էին ժանդարմերիական վարչութիւնները, իսկ երբեմն էլ նախնական քննութիւններ էին կատարում դատաստանական քննիչները, քրէական դատաստանագրքի 545-րդ յօդուածի հիման վրա ուղղակի ներկայացվի նահանգական դատարանների քննութեան, այսինքն առանց նախնական քննութեան, իսկ հարցաքննութիւնները այդպիսի գործերում պէտք է կատարեն ոչ թէ ժանդարմերիական վարչութիւնները, այլ ընդհանուր ոստիկանութիւնը։ («Т.»)

ՄԱՄՈՒԼ

Հայրենասիրութիւնը հակասում է՞ սօցիալիզմի գաղափարին թէ՞ հայրենասիրութիւնը և սօցիալիզմը կարող են իրար հետ զուգընթաց գնալ. այս հարցը դեռ շարունակում է յուզել մտքերը։

Այն օրից, երբ մեր մէջ գոյութիւն ունեցող քաղաքական կուսակցութիւններից մի քանիսը, սկսեցին արհամարհանքով վերաբերվել հայրենասիրութեան գաղափարին, այդ հարցը մեզ համար ևս կարևոր նշանակութիւն ստացաւ։ Հակահայրենասիրութեան գաղափարի գլխաւոր ջատագով հանդիսացաւ Ֆրանսիայում, ինչպէս գիտենք, Հերվէն, բայց նրա քարոզը սաստիկ ընդդիմութեան հանդիպեց նոյնիսկ սօցիալիստների կողմից։ Մի քանի ժամանակ առաջ անկախ սօցիալիստների մի խումբ, բաղկացած ֆրանսիական պարլամենտի 19 պատգամաւորներից, հրատարակեց մի մանիֆեստ՝ Հերվէի հակամիլիտարական և անարխիստական հայեացքների դէմ. այժմ պարլամենտի 18 պատգամաւորներ, սօցիալիստական միացեալ կուսակցութեան անդամներ, որոնց գլուխ է կանգնած Պօլ Բրուսը, մի նոր կոչ է հրատարակել այդ առիթով, որի մէջ ասված է, թէ՝

«Հակահայրենասիրական ագիտացիան, որով զբաղվում է մի փոքրիկ «աղմկող խումբ», որ կամենում է անարխիզմի մեթօդները և թէօրիան պատուաստել սօցիալիզմին,—մի հրէշաւոր և կուսակցութեան համար վնասակար երևոյթ է, որ, իրօք, հակասում է սօցիալիզմի էութեան։ Հաւատարիմ միաժամանակ մեր պարտականութիւններին՝ իբրև ֆրանսիացիներ և կուսակցութեան մշտական աւանդութիւններին, որ յաճախ հաստատել ենք ազգային և միջազգային ժողովներում և դեռ նորերս Նանսիի և Շտուտգարդի ժողովներում, մենք հաւասարապէս և հայրենասէրներ ենք, և բոլոր ազգերի միութեան կողմնակից (ինտերնացիօնալիստ), համոզված թէ անհրաժեշտ է պահպանել խաղաղութիւնը, բայց միևնոյն ժամանակ պատրաստ ենք պաշտպանել հարկաւոր դէպքում իբրև զինւորներ մեր ազգի անկախութիւնը և արժանապատուութիւնը... Լինելով հակառակ ուրիշ դեմօկրատական կուսակցութիւններին տնտեսական հողի վրա, մենք անհրաժեշտօրէն հանդիսանում ենք նրանց դաշնակիցները ռէակցիական կուսակցութիւնների դէմ մղված կռւում։ Մենք ենթադրում ենք, որ մերինի նման մի երկրում, ուր քաղաքական հաստատութիւնները թոյլատրում են բոլոր կուսակցութիւններին և դասակարգերին հնարաւորութիւն՝ հասնելու իշխանութեան, սօցիալիզմի զարգացումը կարող է և պէտք է կատարվի լէգալ միջոցներով։ Անպտուղ և կոյր բռնութեան տեղ մենք նախամեծար ենք համարում սիստեմական, գիտակցական և պտղաբեր ջանքերը։ Աչքից չը թողնելով մեր վերջնական նպատակը, որ կայանում է գոյութիւն ունեցող սօցիալական կազմի արմատական փոփոխութեան մէջ, մենք մտադիր ենք եռանդագին միանալ ռէֆօրմների գործին և դրանով շարունակ մեծացնել պրօլետարիատի բարեկեցութիւնը և ազատութիւնը»։

Ապա կոչը խօսում է և բռնի միջոցների դէմ տնտեսական կռուի մէջ, ինչպէս և այն անհամբերողութեան դէմ այն կուսակցութիւնների անդամների վերաբերմամբ, որոնք որևէ կերպով անհամաձայն են մեծամասնութեան կարծիքին։

Կարժէ, որ տնածին «սօցիալիստները» խելամուտ լինեն այս ճշմարտութեան։

*

Պարիզի «Անահիտ» հանդէսը, խօսելով Յ. Թավշանճեանի սպանութեան մասին, ի միջի այլոց գրում է.

Այդ սպաննուած խեղճ մարդուն դիակին շուրջ երևան եկած բարոյական տգեղութիւնները նոյնքան ցաւալի են՝ որքան նոյն ինքն սպանութիւնը։ «Հայրենիքը», օրգան կուսակցութեան մը՝ որ մինչև հիմա քսան հարուստ սպաննած է ճիշտ նոյն սիստեմով, բողոքի աղաղակներ կը բարձրացնէ, «մեծ ոճիր» կանուանէ ինչ որ «շարք»-ի մը—քսաներորդ շարք—մէկ նոր թիւն է պարզապէս։ Պ. Պարթեան, որ մտքէն չանցուց բողոքել Աբիկ Ունճեանի սպանութեան դէմ, որ այդ բարի, ազգասէր, բազմօգուտ մարդուն խողխողումը շատ բնական ու գովելի գտաւ և անոր դիակին իսկ պղծեց զզուելի ֆրազներով, այսօր ոճրագործ կանուանէ անոնք՝ որոնց—եթէ ոճիր է ատ—ոճրակից եղաւ երէկ... Եւ ինչ ըսել «Երիտասարդ Հայաստանին», որ կը համարձակի յայտարարել, թէ երբէք Հնչակեան կուսակցութիւնը հարուստ չէ սպաննած, ինչ որ պարզ ստութիւն է, ու «եղբայրասպանութիւն» բառը կը յանդգնի արտասանել, մոռնալով որ հայոց մէջ եղբայրասպանութեան ամենէն իրականը և ամենէն գազանականը այդ «Երիտասարդ Հայաստանի» պարոնները և իրենց պետ Սագունին գործեցին՝ վատաբար սպաննել տալով հայ ազգին ամենէն աքանչելի զաւակներէն երկուքը, Միսօն և Զիթճեանը...

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 20 հոկտեմբերի

Ներկայ տարվայ սեպտեմբեր ամսից Երևանի նահանգի Կարճևան գիւղում բացվել է միդասեան ուսումնարան երկսեռ մանուկների համար։

Շատ ուրախալի է, որ գիտակցելով ուսման մեծ կարևորութիւնը՝ Կարճևանը յետ չէ ուզում մնալ իր հարևան գիւղերից։ Իմ ծննդավայր գիւղի այդ առաջադիմական քայլը՝ կրթարան հիմնելը՝ շատ մօտ ընդունելով սրտիս, ես կը ցանկանայի որ հէնց սկզբից լուրջ և ամուր հիմքերի վրա դրված լինէր դպրոցը, գոյութիւն ունենար նա ոչ միայն անունով, այլ և ըստ էութեան։

Որքան ինձ յայտնի է, յիշեալ դպրոցի համար արդէն վարձված է մի վարժուհի և մի ուսուցիչ (ամուսիններ) 800 րուբլի թոշակով։ Մօտիկից ծանօթ լինելով իմ ծննդավայր գիւղի սուղ միջոցներին, ես կարծում եմ, որ այդ գումարը նրա ուժից շատ վեր է։ Մօտ 70—80 տնից բաղկացած Կարճևանը հազիւ թէ կարող լինի ուսումնարան ուղարկել 50-ի չափ աշակերտ-աշակերտուհիներ (շատերը ուսանում են քաղաքներում). արդ՝ եթէ աշակերտների վրա ուսման վարձ նշանակվի, այն ժամանակ ամեն մի աշակերտ պիտի վճարի մօտ 16 րուբլի. հնարաւո՞ր է այդ։

Ի՞նչ կանեն նրանք, որոնց տնից սովորում են երկու կամ աւելի հոգի. իսկ եթէ ամբողջ գիւղի վրա է ծանրանալու այդ գումարը, կարո՞ղ է արդեօք կարճևանցին թէ ուսուցչի վարձը վճարել, թէ դպրոցի կահկարասիքները պատրաստել, դասական պիտոյքներ գնել։ Դեռ չեմ ասում այն, որ դպրոցական յարմար շէնք չը կայ, մի հին քարուքանդ սենեակ է, որտեղ մի կերպ տեղաւորվում են երկսեռ մանուկները. անհրաժեշտ է այդ մասին նախ հոգալ։

Այդ բոլորը աչքի առաջ ունենալով, ես, կարճևանցիներից մէկը, իրաւունք եմ համարում մատնացոյց անել այդ հանգամանքի վրա, և քանի ուշ չէ, հրաւիրել օտարութեան մէջ գտնվող իմ բոլոր համագիւղացիներին գոնէ մտածելու այդ մասին։

Ես կառաջարկէի ընտրել 2—3 հոգուց բաղկացած մի մարմին, որը հոգ տանէր դրսից գտնելու այդ 800 րուբլու գոնէ կէսը կամաւոր նուիրատուութեամբ կամ անդամավճար նշանակելով, ինչպէս այդ յարմար կը գտնվի, որպէս զի դրանով թեթևացրած լինենք մեր գիւղացիների դրութիւնը և ապահոված լինենք ուսումնարանի կանոնաւոր ընթացքը այս տարի. իսկ ապագայի համար ժամանակը և փորձը ցոյց կը տայ թէ ինչ պիտի անել և ինչ եկամուտներով ապահովել դպրոցի գոյութիւնը։

Ս. Տէր-Վահանեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Ներքին

24 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը բարեհաճեց Ռուսաց Զինւորական-պատմական Ընկերութեան Կայսերական անունը շնորհել և ընդունել Նրա պատուաւոր նախագահի կոչումը։

ՎԱՐՇԱՎԱ։ Պահնորդական բաժինը ձերբակալեց լեհական սօցիալիստական կուսակցութեան յեղափոխական կազմակերպութեան 34 անդամներին։

25 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը հրահանգագրով պատուիրագրեց միջոցներ ձեռք առնել, որպէսզի բարձրագոյն կրթական հաստատութիւններն աւարտելու վկայականները քննութիւն բռնողներին տրվեն ոչ այլ կերպ, բայց միայն միջնակարգ դպրոցն աւարտելու վկայականների իսկական բնագրերը տեսնելուց յետոյ։ Կեղծիքներ գտնելու դէպքում անյապաղ գործը յանձնել դատարանին։

ՍԱՐԱՏՈՎ։ Հոկտեմբերի 23-ի երեկոյեան Բալաշովում 10 զինված դիմակաւորված մարդիկ ներս խուժեցին Բականովսկու տպարանը, սպառնալիքներով ստիպեցին շարել և տպել 1500 օրինակ յեղափոխական կոչից և, վերցնելով տպածը, անյայտացան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մինիստրների խորհուրդը հոկտեմբերի 22-ի նիստում որոշեց՝ լիազօրութիւն տալ ներքին գործերի մինիստրին ծախսել անբերրիութիւնից այս տարի վնասված ազգաբնակութեան օգտին յատկացրած 6 միլիօն նպաստի մնացորդը։

Ներքին գործերի մինիստրութեան մատակարարական մասի տեղեկութիւններից երևում է, որ աշնանացանը վատ է լինելու Վօլինսկի, Կիևի, Կուրսկի, Կալեցկի, Լիւբլինսկի, Օրլովի, Պօզոլի, Սարատովի, Սէդլեցի, Տամբովի, Խարկովի, Խերսոնի, Չերնօմօրսկի նահանգներում և Դոնեան Զօրաց շրջանում։ Լաւ է լինելու Բագուի, Բեսարաբիայի, Վլադիմիրի, Վեատկայի, Իրկուտսկի, Մինսկի, Պերմի, Պետրոկովսկի, Պետերբուրգի, Սիմբիրսկի, Սուվալկայի, Տաւրիչեսկի, Տօբոլի, Տօմսկի, Ուֆայի նահանգներում, Անդրբայկալեան, Տուրգայսկի և Ախալքալաքի շրջաններում։ Մնացած նահանգներում և յիշեալ նահանգների մի քանի գաւառներում աշնանացանը միջակ է։

ՎԱՐՇԱՎԱ։ Պահնորդական բաժինը ձերբակալեց լեհ. դեմ. կուսակցութեան 11 անդամի։

Արտաքին

24 հոկտեմբերի

ՀԱԱԳԱ։ Նիդէրլանդիայի կառավարութիւնը տեղեկութիւն ստացաւ, որ Վիլհէլմ կայսրը յետաձգել է Նիդէրլանդիա գալը, որովհետև ստամոքսի բորբոքումը կատարելապէս բժշկելու համար նա երկու շաբաթով մնալու է Ուայտում։

ՊԱՐԻԶ։ Վերջացաւ Մարոկկօյի վերաբերութեամբ դեղին գրքի տպագրութիւնը։ Պիշօնը սպասում է, որ գրքերը բաժանվեն և ստացվի Գերմանիայի համաձայնութիւնը՝ հրատարակելու այն դօկումենտները, որոնք բղխում են արտաքին գործերի ստատս-սեկրետար ֆօն-Չիրշկից։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Մանիլլայից ստացված հեռագիրը հաստատում է, որ զինւորական մինիստրը հրաժարվել է Եւրօպա այցելելուց և հայրենիք կը վերադառնայ Խաղաղ ովկիանոսի վրայով։

ՄԱՐՍԷՅԼ։ Ալիւրավաճառների սինդիկալ պալատի բիւրօն պաշտօնական բողոք յայտնեց այն ռուս հացավաճառների գործելակերպի դէմ, որոնք հրաժարվեցին կատարել հացի մատակարարութեան պարտականութիւնները, յենվելով այն բանի վրա, որ Ռուսաստանում հացի գները բարձրացել են։

ՄԻՆԻԱՊՕԼԻՍ։ Ֆինանսական ճգնաժամի պատճառով շատ ջրաղացներում աշխատանքները կանգ առան։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Պետական գանձատան քարտուղար Պօրտ-Էլիօն տեղական բանկերը ներս տարաւ եօթ միլիօն դօլլար ոսկի։

Երկրում ընտրութիւնները հանգիստ անցան։

ԲԵՐԼԻՆ։ Խմբագիր Բրանդը իշխան Բիւլօվին վիրաւորելու համար բանտարկութեան դատապարտվեց և իսկոյն հսկողութեան տակ դրվեց։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—10 ժ. աչքի, ներքին և ներվային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1\frac{1}{2}$—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ⟶

ԲԱԳՈՒ (Գանձակ, Եւլախ)

Արագ—գիշ. 12 ժ. 28 ր., Գանձակ—գիշ. 5 ժ. 42 ր., Եւլախ—առաւ. 7 ժ. 19 ր., Բագու—ցեր. 2 ժ. 43 ր.։ Պօստ.—երեկ. 9 ժ. 41 ր., Գանձակ—գիշ. 4 ժ. 13 ր., Եւլախ—առ. 6 ժ. 27 ր., Բագու—ցեր. 5 ժ. 39 ր.։ Մարդատար—ցեր. 7 ժ. 53. ր., Գանձակ—ցեր. 2 ժ. 10 ր., Եւլախ—ցեր. 4 ժ. 21 ր., Բագու—գիշ. 1 ժ. 50 ր.։

ԲԱԹՈՒՄ (Փօթի, Միխայլօվօ, Ռիօն)

Մարդատար (№ 7).—առ. 10 ժ. 58 ր., Փօթի—ցեր. 1 ժ. 30 ր., Միխայլօվօ—ցեր. 2 ժ. 58 ր., Ռիօն—երեկ. 7 ժ. 21 ր., Բաթում—գիշ. 12 ժ. 10 ր.։ Պօստ.—առ. 9 ժ. 15 ր., Փօթի—ցեր. 11 ժ. 49 ր., Միխայլօվօ—ցեր. 1 ժ. 19 ր., Ռիօն—երեկ. 5 ժ. 47 ր., Բաթում—գիշ. 10 ժ. 45 ր.։ Մարդատար (№ 5)—գիշ. 11 ժ. 22 ր., Փօթի—գիշ. 1 ժ. 57 ր., Միխայլօվօ—գիշ. 3 ժ. 20 ր., Ռիօն—առ. 7 ժ. 41 ր., Բաթում—ցեր. 12 ժ. 27 ր.։

ԵՐԵՒԱՆ (Ալէքսանդրօպօլ)

Ապր.-մարդ.—ցեր. 3 ժ. 16 ր., Ալէքսանդրօպօլ—գիշ. 2 ժ. 30 ր., Երևան-Ուլուխ. առ. 8 ժ. 22 ր.։ Պօստ.—գիշ. 1 ժ. 8 ր., Ալէքսանդրօպօլ—ցեր. 11 ժ. 53 ր., Երևան—Ուլուխ.—ցեր. 5 ժ. 35 ր., Նախիջևան—գիշ. 12 ժ. 32 ր., Ջուլֆա—գիշ. 2 ժ. 35 ր.։

ԲԱԳՈՒԻՑ (Պետերբուրգի ժամանակով)

Մարդատար—առ. 4 ժ. արագ.—ցեր. 4 ժ. 4 ր.։ Պօստ.—ցեր. 11 ժ. 23 ր.։

ԲԱԹՈՒՄԻՑ—Մարդ.—առ. 10 ժ. 38 ր.։ Պօստ.—առ. 6 ժ. 49 ր.։ Մարդատ.—ցեր. 5 ժ. 46 ր.։

ԵՐԵՒԱՆ-ՈՒԼՈՒԽԱՆԼՈՒԻՑ — Պօստ.—առ. 1 ժ. 58 ր.։ Ապրանք.-մարդատար—գիշ. 1 ժ. 50 ր.։

ՋՈՒԼՖԱՅԻՑ—Պօստ. գիշ. 4 ժամին։ Մարդ.-ապրանք.—ցեր. 3 ժ. 21 ր.։

ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ — Պօստ. — 7 ժամին։ Մրդ.-ապրանք.—6 ժ. 58 ր.։

Երկուշաբթի, 29 հոկտեմբերի,
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Հայ դերասանական խումբը
Կը ներկայացնէ
Առաջին անգամ ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ նոր պիէսը
ԲԱՂՆԻՍԻ ԲՈԽՉԱ
Կատակ. 2 գործողութեամբ
և
ԵՕԼԱՆՏԱ
Պիէս 1 գործ., հեղ. Անդերսէնի
Ներկայացման կարգը. I ԵՕԼԱՆՏԱ, II ԲԱՂՆԻՍԻ ԲՈԽՉԱ
Մասնակցում է ամբողջ խումբը
Տեղերի գները բարձրացրած են
Սկիզբն է 8 ժ. երեկոյեան
(ու. շ. կ.) 1—3

ՀՐԱՒԷՐ

Ներկայ տարվայ հոկտեմբերի 28-ին, կիրակի օր, ժամը 12-ին, ս. պատարագից յետոյ Վանքի աւագ եկեղեցում լինելու է երկրորդ անգամ ժողով՝ նոր երէցփոխան և մի քահանայացու ընտրելու համար. ժողովը լինելու է՝ երէցփոխանի ընտրութեան համար երկրորդը, իսկ քահանայացուի համար առաջին. ուստի պատիւ ունեմ կրկին հրաւիրել 21 տարին լրացրած երկսեռ յարգելի ծխերին, որ յիշեալ օրն և ժամին շտապեն եկեղեցի ընտրութեանը մասնակցելու։

Գործակալ՝

Գրիգոր աւագ քահ. Մանդակունի

(ու. շ.) 1—2

Լոյս են տեսել
ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս.-ի
ԵՐԵՔ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ
ԵՐԵՔ ՈՍԿՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
գիրքը, ընտիր թղթի վրա, գինը 25 կոպ.
և
X ՀԱՐՈՒՍՏԸ ՄԱԽԱԹԻ ԾԱԿՈՒՄ
գրքոյկը, 64 էջ, գինը 15 կոպ.
Հարցնել՝ Կենտր., Գուտտ. և Փարոս գրախանութներում։ 17 գրքերն արժեն 4 րուբ. 30 կ.։ Բոլոր ցանկացողները պէտք է վճարեն միայն 3 ր. 60 կ., ճանապարհածախս հարկաւոր չէ։ (կ. շ) 8—10

Լոյս տեսաւ
«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ»
գրախանութի
ՆՈՐ ԸՆԴԱՐՁԱԿ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ
Ցանկացողներին ուղարկվում է ձրի։ 4—5

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։
(ա. օ.) 31—160

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ստամոքսի եւ աղիքների հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր: 12—1 ժ. առաւօտեան, 5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց տ. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 20—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմեօնօվսկի փողոց, № 16։
(ու. կ. ե.) 20—30

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
Ե. ԹՈՓՉԵԱՆԻ խմբագրած
„ԼՈՅՍ“
ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑԸ 1908 Թ.
308 երես, 12 գունատիպ պատկերներով,
ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.
Գումարով գնողներին բաւարար զեղչ։ Գլխաւոր պահեստը «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում։ 2—5

ԲԺԻՇԿՆԵՐ
Ն. Մ. ՊՐՕԶՕՐՕՎՍԿՈՒ
և Դ. Ն. ԱԹԱԲԷԳԵԱՆԻ
ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ծննդաբերական բաժանմունքով.
Մշտական մահճակալներ
հիւանդների և ծննդկանների համար։
Հանգստի և ընդհանուր պալատներ։ Հիւանդանոցը ունի նոր ապարատներ էլեքտրականութեամբ և լոյսով բժշկելու համար։ Անվտանգ ռօզիոններ։ Բաց է հիւանդներին և ծննդկաններին ընդունելու համար ամենայն օր, ամբողջ տարի։ Ըստ ցանկութեան համախորհուրդներ պրօֆէսորների հետ։ Պայմանները ուղարկվում են ձրի։ Մօսկվա, Մեասնիցկայա փող., տ. Ստրագանովսկու դպրոցի, բնակ. № 73, դուռ № 7, Բանկովսկի միջանցքի կողմից։ Հեռախօս № 214—54. (չ. ու.) 3—10

ПРОДАЖА ВЕЗДѢ во всѣхъ аптекахъ, аптекарскихъ, косметическихъ и парфюмерныхъ магазинахъ.
КРЕМЪ РЕНЕССАНСЪ
de la Reine.
ДАРИТЪ ЖЕНЩИНАМЪ КРАСОТУ.
ГЛАВНАЯ КОНТОРА ТОВАРИЩЕСТВА „РЕНЕССАНСЪ"
С.-Петербургъ, Владимірскій пр., д. Дидерихса № 23.
ПЕРВЫЙ РАЗЪ „Кремъ Ренессансъ" De la Reine для пробы высылается всѣмъ женщинамъ ДАРОМЪ.
На почтовые расходы 14 коп. марки высылать „заказнымъ".

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
„КАВКАЗСКОЕ ТОВАРИЩЕСТВО"
торговли аптекарскими товарами
ՄԱԳԱԶԻՆՈՒՄ
1) Эриванская площадь, д. Гургенова.
2) Михайловскій пр., д. Арамаклисовой.
Թելաւում՝ Ա. Ի. ՎՈԼՕԽՕՎԻ դեղատանը։
(134167) (24, 26, 28, 30.) 2—4

ԱՄԵՆԱԼԱՒ ՇԵՎԻՕՏ „ՄՕՆԳՕԼԻԱ“
ՄՕԴԱՅԻՆ ՏՐԻԿՕ
Դիմացկուն կտոր՝ տղամարդի շքեղ և նշանաւոր զգեստի համար։ Կտորի գոյնը սև, ձիթապտղի կամ շօկօլադի գոյն, գործված նոր մօդային փայլուն նշաններով, շերտերով կամ վանդակներով։ Գործարանը ուղարկում է կտորներով, $4\frac{1}{2}$ արշ. ամբողջ կօստիւմի համար, 5 րուբլի 25 կոպ., լաւագոյն տեսակը 6 ր. 25 կոպէկով։
3 կամ աւելի կտորներ պահանջելիս ուղարկվում է պահանջվելիք աստառը իբրև ընծայ՝
բոլորովին ՁՐԻ
Արկղը և ճանապարհածախսը գործարանի հաշւով. վերադիր վճարի համար աւելացվում է րուբլուն 2 կոպէկ։ Պահանջները ուղղել.
Лодзь, С. Рубашкину.
Ֆիրման արժանացել է ոսկէ շքանշանի Բրիւսսէլում 1905 թ.
ԱՌԱՆՑ ՌԻՍԿԻ. չը հաւանած ապրանքը ընդունվում է յետ՝ ուրիշ ապրանքի հետ փոխելու, կամ փողը վերադարձվում է։ (5 օրը մի անգ.) 2—4

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіаковъ съ С-ми. Болшая Ванкская ул. д. Семинаріи № 3.